ցանկից՝ 2 4-րդ կիսամյակների ընթացքում: Տվյալ ծրագրի կամընտրական դասընթացներից ընտրվող դասընթացների ընդհանուր աշխատաժամայինը պետք է կազմի առնվազն 9 կերդիտ, իսկ առաջարկվող դասընթացների քանակը՝ պահանջվածից առնվազն 2 անգամ ավելի:

Կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երեքը:

1. Մագիստրոսական ծրագիր՝

**«Սոցիալական հոգեբանություն»**

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատ - ման ձևը
10/M11	Ներդրվեզվաբանական ծրագրավորում	3	32/0/0	I	Քննություն
10/M12	Զանգվածային գիտակցության	3	32/0/0	I	Քննություն
10/M13	Հոգեֆիզիոլոգիա	3	32/0/0	II	Քննություն
10/M14	Սոցիալ-հոգեբանական տեխնոլոգիաներ	3	32/0/0	II	Քննություն
10/M27	Արտ-թերապիա	3	32/0/0	III	Քննություն
10/M29	Սոցիալ-հոգեբանական մարզում	3	32/0/0	III	Քննություն

2. Մագիստրոսական ծրագիր՝

**«Կլինիկական հոգեբանություն»**

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատ - ման ձևը
10/M11	Ներդրվեզվաբանական ծրագրավորում	3	32/0/0	I	Քննություն
10/M12	Զանգվածային գիտակցության հոգեբանություն	3	32/0/0	I	Քննություն
10/M13	Հոգեֆիզիոլոգիա	3	32/0/0	I I	Քննություն
10/M14	Սոցիալ-հոգեբանական տեխնոլոգիաներ	3	32/0/0	II	Քննություն
10/M27	Արտ-թերապիա	3	32/0/0	III	Քննություն

10/M29	Մոցիալ-հոգեբանական մարզում	3	32/0/0	III	Քննություն
--------	-------------------------------	---	--------	-----	------------

## 2.2. Հետազոտական կառուցամաս

Ծրագրի հետազոտական կառուցամասը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ **գիտական սեմինար, գիտահետազոտական աշխատանք, գիտահետազոտական պրակտիկա, գիտամանկավարժական պրակտիկա** և **մագիստրոսական թեզ**:

**Գիտական սեմինարը** ծրագիրն իրականացնող կառույցի (գիտական կազմակերպություն, ամբիոն, կենտրոն) կողմից կազմակերպվող կանոնավոր գործող սեմինարների շարք է, որի կայացման ժամանակացույցը սահմանվում է մագիստրոսական ծրագրի տվյալ կիսամյակի դասացուցակով: Գիտական սեմինարի ընթացքում մագիստրանտներին ցուցաբերվում է գիտական հետազոտություն կատարելու մեթոդաբանական և մեթոդական աջակցություն, ձևավորվում են գիտական սեմինարներին հաղորդումներ և զեկուցումներ ներկայացնելու, գիտական բանավեճ վարելու, գրախոսություններով հանդես գալու հմտություններ:

**Գիտահետազոտական աշխատանքի** բովանդակությունը պայմանավորվում է ուսանողի մագիստրոսական թեզի թեմայի խնդիրներով և կազմվում է գիտական ղեկավարի հետ համատեղ: Այն կազմակերպվում է ուսումնառության 1-ին, 2-րդ, 3-րդ և 4 կիսամյակներում՝ ընդհանուր 18 կրեդիտ աշխատաժամակով:

**Գիտահետազոտական պրակտիկան** կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող է իրականացվել ամբիոնի կամ լաբորատորիայի գիտական թեմաների շրջանակներում: Ունի 3 կրեդիտ աշխատաժամակ:

**Գիտամանկավարժական պրակտիկան** կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Այն ևս ունի 3 կրեդիտ աշխատաժամակ:

**Մագիստրոսական թեզի** կատարումը և նրա պաշտպանությունը մագիստրոսի կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որն իրականացվում է 4-րդ կիսամյակում: Մագիստրոսական թեզի կատարման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 12 կրեդիտ աշխատաժ

## Մաս II.

### ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

## 1. ՏԵՂԵԿԱԳՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ

*Դասընթացների տեղեկագիրքը* նախատեսված է «Հոգեբանության» ամբիոնում իրականացվող մագիստրոսի կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես ուսումնական ծրագրերի, այնպես էլ դրանց բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է՝

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված էլքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջներն ու ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:



## Մոցիալական հոգեբանություն»

### Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ

05/M08. Համակարգչագիտություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

#### Նպատակը.

Ուսումնական գործունեության ընթացքում ուսանողների մեջ զարգացնել ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտին վերաբերվող ընդհանուր տեսական և պրակտիկ գիտելիքներ: Ծրագրի նպատակն է նաև ուսանողներին զինել ինֆորմատիկայի բնագավառում տարբեր ծրագրերի ուսումնասիրությունով և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը վերաբերող գիտելիքներով:

#### Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

##### 1.կիմանա

1.1. Լսել և հասկանալ լսածի հիմնական միտքը և հատուկ ինֆորմացիան,

1.2. Վերարտադրել և վերլուծել տվյալ թեմաները,

##### 2. կկարողանա

2.1. Ինքնուրույն օգտվել համակարգչից,

2.2. Բացատրել մասնագիտական տերմինները,

2.3. Քննարկել թեման՝ օգտագործելով նոր թեմատիկ մասնագիտական

բառապաշար,

##### 3.կտիրապետի

3.1. Մասնագիտական տարբեր ինֆորմացիոն ծրագրերին,

3.2. Ինֆորմացիոն տեխնոլոգիաների անձնահատուկ կառույցներին,

3.3. Թեմատիկ մասնագիտական նոր բառապաշարին:

#### Բովանդակությունը.

**Թեմա1՝** Օպերացիոն համակարգեր: **Թեմա 2՝** Լոկալ և գլոբալ ցանցեր: **Թեմա 3՝** Պերիֆերիկ սարքավորումներ: **Թեմա 4՝** Համակարգչային վիրուսներ: **Թեմա 5՝** Մուտքի և էլքի սարքավորումներ: **Թեմա 6՝** Microsoft Office փաթեթի ծրագրեր: **Թեմա 7՝** Տեքստային խմբագրիչներ: **Թեմա 8՝** Էլեկտրոնային աղյուսակներ: **Թեմա 9՝** Ինֆորմացիայի համակարգչային ցուցադրում: **Թեմա 10՝** Ինտերնետ, էլեկտրոնային նամակներ:

#### Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ ռեֆերատի ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

#### Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատումը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

10/M06. Մասնագիտության արդի հիմնախնդիրները (3 կրեդիտ)

**Նպատակը.**

Առարկայի **նպատակն** է՝ ներկայացնել մարդու հոգեկան գործունեության, նրա անձի և վարքի ձևավորման, հոգեկան երևույթների օրինաչափությունների ուսումնասիրության բնագավառներում առկա հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա** հոգեբանության արդի դերը գիտությունների համակարգում,

**2. կկարողանա**

2.1. ներկայացնել հոգեկանի հիմնախնդիրները օբյեկտիվ իրականության սուբյեկտիվ արտացոլման գործընթացում,

2.2. ներկայացնել հոգեբանական հիմնախնդիրների արտացոլումը ժամանակակից հոգեբանական հայեցակարգերում,

**3. կտիրապետի**

3.1. ներկայացնել հոգեբանական հիմնախնդիրները հոգեկանի ակտիվության մակարդակներում,

3.2. ներկայացնել հոգեբանական հիմնախնդիրները անձի անհատական առանձնահատկություններում և գործունեության մեջ:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Հոգեբանության խնդիրները և դերը գիտությունների համակարգում: **Թեմա 2՝** Հոգեկանի հիմնախնդիրները: **Թեմա 3՝** Հոգեբանական հիմնախնդիրների արտացոլումը հոգեբանական հայեցակարգերում: **Թեմա 4՝** Հոգեբանական հիմնախնդիրները հոգեկան ակտիվության մակարդակներում: **Թեմա 5՝** Հոգեբանական հիմնախնդիրները խառնվածքի և բնավորության տիպերում: **Թեմա 6՝** Հոգեբանական ինքնապաշտպանություն:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ ռեֆերատի ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

**Լրացական դասընթացներ**

**18/M01. Մասնագիտական օտար լեզու (անգլերեն-1-2) - (0 կրեդիտ)**

Շարքաթական 2 ժամ, 1-ին և 2-րդ կիսամյակ, ստուգարք

**Նպատակը.**

Երկու կիսամյակ տևողությամբ ուսումնական գործունեության ընթացքում “Սոցիալական հոգեբանություն” ֆակուլտետի ուսանողերին ուսուցանել անգլերեն լեզու, որն իր մեջ ներառում է քերականական ժամանակաձևերի, կառուցվածքների ուսումնասիրում և ամրապնդում՝ նախօրոք մշակված վարժությունների և

թեմատիկ նյութերի միջոցով, համապատասխան մասնագիտական տերմինների, բառերի ու արտահայտությունների ուսումնասիրում և տիրապետում՝ համապատասխան տեքստերի միջոցով, տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառում՝ օգնելու սովորողներին զարգացնելու խոսքային հմտություններն ու կարողությունները, լրացուցիչ մասնագիտական և ոչ մասնագիտական տեքստերի վրա ինքնուրույն աշխատանք՝ օգտագործելով համապատասխան բառարաններ (տեքստերի թարգմանություն՝ անգլերենից-հայերեն, հայերենից-անգլերեն, տեքստերի վերարտադրում, բառարանային աշխատանք և այլն): Ծրագրի շրջանակներում նախատեսված է սովորողներին ծանոթացնել լեզուն ուսումնասիրելու հետ կապված խնդիրներին, նպատակներին, սկզբունքներին, ինչպես նաև օգնել հաղթահարելու սովորելու ընթացքում հանդիպող դժվարություններն ու խոչընդոտները:

Դասընթացի ընթացքում ուսանողները ձեռք կբերեն համապատասխան լեզվական տեսական և գործնական գիտելիքներ, որոնք նրանց կօգնեն արդյունավետորեն և ինքնուրույն օգտվելու անգլերեն լեզվով մասնագիտական տեքստերից, հաղորդակցվելու, մասնակցելու բանավեճերի, քննարկումների, ներկայացնելու հավելյալ նյութեր /պրեզենտացիաներ/:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

#### **1. կիմանա**

- 1.1. անգլերեն լեզվի ժամանակաձևերը, քերականական կառուցվածքները, մասնագիտական բավարար բառապաշար,
- 1.2. անհրաժեշտ ուսումնական ձեռնարկների, դասագրքերի արդյունավետ օգտագործման ձևերն ու եղանակները՝ խթանելու համար անգլերեն լեզվի զարգացմանն ու խորացմանը,
- 1.3. համապատասխան մեթոդիկա՝ մասնագիտական տերմինների և բառապաշարի մտապահման և ամրապնդման համար,
- 1.4. Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառում:

#### **2. կկարողանա**

- 2.1. ճշտորեն օգտագործել քերականական ժամանակաձևերը և կառուցվածքները,
- 2.2. օգտվել անգլերեն լեզվով մասնագիտական գրականությունից, մեթոդական ուղեցույցներից՝ խորացնելու համար մասնագիտական գիտելիքները,
- 2.3. արդյունավետորեն օգտագործել բառարանները,
- 2.4. պատրաստել պրեզենտացիաներ, զեկուցումներ,
- 2.5. խոսակցել անգլերենով՝ կիրառելով մասնագիտական տերմինների և արտահայտությունների անհրաժեշտ պաշար,
- 2.6. լսել և հասկանալ անգլերեն լեզվով տեքստեր,
- 2.7. մասնակցել բանավոր քննարկումների, բանավեճերի կամ էլ՝ երկխոսությունների:

#### **3. կտիրապետի**

- 3.1. քերականական ժամանակաձևերին ու կառուցվածքներին,
- 3.2. անգլերեն լեզվի տեսական և գործնական գիտելիքներին,
- 3.3. անգլերենի խոսակցական լեզվին /բավարար, միջին կամ ավելի բարձր մակարդակով՝ կախված սովորողների ընդունակություններից/,

- 3.4. մասնագիտական տերմինաբանությանն ու բառապաշարին,  
 3.5. անգլերենից՝ հայերեն և հայերենից՝ անգլերեն մասնագիտական և ոչ  
 մասնագիտական տեքստերի թարգմանչական տեխնիկային:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1**՝ Ներածություն: **Թեմա 2**՝ The Present Simple, the Present Continuous Tense, Stative Verbs. Introducing Yourself: **Թեմա 3**՝ Phrasal Verbs, Word Formation, Prepositional Phrases. What is Psychology /մաս 1/ : **Թեմա 4**՝ The Past Simple, the Past Continuous Tense. What is psychology? /մաս 2/: **Թեմա 5**՝ Used to կառուցվածքը, Word Patterns. My Friend: **Թեմա 6**՝ Present Perfect Simple, the Present Perfect Continuous. My Friend Marina/մաս 2/: **Թեմա 7**՝ Գիտելիքի ստուգում /I փուլ/: **Թեմա 8**՝ Նախագիծ: **Թեմա 9**՝ The Past Perfect Tense ,the Past Perfect Continuous Tense You and Your Friends /մաս 1/: **Թեմա 10**՝ Phrasal Verbs, Prepositional Phrases. You and Your Friend /մաս 2/: **Թեմա 11**՝ The Future Indefinite Tense, the Future Continuous Tense /the Present Time /My Family /մաս 1/: **Թեմա 12**՝ Prepositions of Time and Place. .My Family /մաս 2/: **Թեմա 13**՝ Prepositional Phrases, Phrasal Verbs, Word Formation/Unit 9/. Family problems /մաս 1/: **Թեմա 14**՝ Question Tags, Phrasal Verbs, Prepositional Phrases, Word Formation. Family Problems /մաս 2/: **Թեմա 15**՝ Նախագիծ: **Թեմա 16**՝ Եզրափակիչ ստուգարք: **Թեմա 17**՝ My University /մաս 1/: **Թեմա 18**՝ My University /մաս 2/: **Թեմա 19**՝ Cambridge University Department of Psychology /մաս 1/: **Թեմա 20**՝ Cambridge University Department of Psychology /մաս 2/: **Թեմա 21**՝ The Russian Soul /մաս 1/: **Թեմա 22**՝ The Russian Soul /մաս 2/: **Թեմա 23**՝ Գիտելիքի ստուգում: **Թեմա 24**՝ Նախագիծ: **Թեմա 25**. Freud’s House in London /մաս 1/: **Թեմա 26**՝ Pronouns and Possessive Determiners/Unit 16/. Freud’s House in London /մաս 2/: **Թեմա 27**՝ American Values /մաս 1/: **Թեմա 28**՝ American Values /մաս 2/: **Թեմա 29**՝ Careers in Psychology /մաս 1/: **Թեմա 30**՝ Careers in Psychology /մաս 2/: **Թեմա 31**՝ Նախագիծ: **Թեմա 32**՝ Եզրափակիչ ստուգարք

**Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Ստուգարքն անցկացվում է ստուգարքային թեստի դրական գնահատականի և եզրափակիչ բանավոր պատասխանի հիման վրա:

**Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ**

**10/M02. Անձի ժամանակակից կոնցեպցիաներ 1 (3 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ծրագրի նպատակն է՝ ուսանողներին ներկայացնել անձը բացատրող և սահմանող ժամանակակից տեսությունները, քննարկել տարբեր մոտեցումներ անձի վերաբերյալ, ինչպես նաև դիտարկել անձն այդ մոտեցումների հարացույցում:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1.կիմանա** կլինիկական հոգեբանության հիմնական ոլորտները, հոգեկան գործընթացների և վարքային խանգարումների հիմնական առանձնահատկությունները, ծագման պատճառները, հոգեթերապևտիկ հնարավորությունները,

**2. կկարողանա** բանավոր և գրավոր խոսքով ներկայացնել իրենց գիտելիքները, համադրել հոգեբանական նոր տեղեկությունները իրենց գիտելիքների հետ, կունենան անհատական գործունեության ընթացքում կլինիկական հոգեբանության ոլորտում ուսումնասիրություններ և հոգեբանական աշխատանք կատարելու հմտություններ և կարողություններ,

**3. կտիրապետի** հոգեբանական գիտելիքները գործնականում կիրառելու մեթոդներին, ճշգրիտ հոգեախտորոշումը, այցելու-կլինիկական հոգեբան հարաբերություններ արդյունավետ կառուցելու հոգեբանական միջոցներին:

**Բովանդակությունը.**

*Թեմա 1*՝ Անձը ժամանակակից գիտական համակարգում: *Թեմա 2*՝ Պոստֆրեյդիստներ: *Թեմա 3*՝ Ա.Ադլեր և անհատական հոգեբանություն: *Թեմա 4*՝ Կ.Հորնի և հումանիստական հոգեվերլուծություն: *Թեմա 5*՝ Է.Էրիքսոն և կյանքի էպիզենետիկ մոդելը: *Թեմա 6*՝ Վ.Ռայս և հոգեսումատիկա: *Թեմա 7*՝ Կ.Ռոջերս և հումանիստական հոգեբանություն

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են գրավոր աշխատանքի գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3: 3,5: 3,5 միավոր:

**10/M02. Անձի ժամանակակից կոնցեպցիաներ 2 (3 կրեդիտ)**

*Շարաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Օրագրի նպատակն է՝ ուսանողներին ներկայացնել անձը բացատրող և սահմանող ժամանակակից տեսությունները, քննարկել տարբեր մոտեցումներ անձի վերաբերյալ, ինչպես նաև դիտարկել անձն այդ մոտեցումների հարացույցում:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա** կլինիկական հոգեբանության հիմնական ոլորտները, հոգեկան գործընթացների և վարքային խանգարումների հիմնական առանձնահատկությունները, ծագման պատճառները, հոգեթերապևտիկ հնարավորությունները,

**2. կկարողանա** բանավոր և գրավոր խոսքով ներկայացնել իրենց գիտելիքները, համադրել հոգեբանական նոր տեղեկությունները իրենց գիտելիքների հետ, կունենան անհատական գործունեության ընթացքում կլինիկական հոգեբանության ոլորտում ուսումնասիրություններ և հոգեբանական աշխատանք կատարելու հմտություններ և կարողություններ,

**3. կտիրապետի** հոգեբանական գիտելիքները գործնականում կիրառելու մեթոդներին, ճշգրիտ հոգեախտորոշումը, այցելու-կլինիկական հոգեբան հարաբերություններ արդյունավետ կառուցելու հոգեբանական միջոցներին:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1**՝ Է Ֆրոմ և հումանիստական հոգեվերլուծություն: **Թեմա 2**՝ Հ.Ս.Սալիվան և հոգեբուժության միջանձնային տեսությունը: **Թեմա 3**՝ Կ.Ռոջերս ,Ա.Սալտու և հումանիստական հոգեբանություն: **Թեմա 4**՝ Չեն-բուդդիզմի հիմնադրույթները: **Թեմա 5**՝ Ալբերտ Բանդուրա և սոցիալ-կոգնիտիվ տեսությունը: **Թեմա 6**՝ Ռ.Մեյ և էքզիստենցիալ հոգեբանություն: **Թեմա 7**՝ Վ.Ֆրանկլ և լոգոթերապիա

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են գրավոր աշխատանքի գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3,5, 3,5 միավոր:

**10/M04. Անալիտիկ հոգեբանություն (3 կրեդիտ)**

**Շարաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց**

**Նպատակը.**

Ուսանողին կրեդիտային համակարգով ուսումնական գործունեության ընթացքում գիտելիքներ հաղորդել Յունգյան հոգեբանական տեսության մասին, արքետիպերի, անձի զարգացման գործընթացում արքետիպերի ազդեցության, խառնվածքների՝ էքստրավերտ-ինտրովերտ, հոգեկանի ֆունկցիաների և նրանց մեխանիզմների, երազատեսության, ակտիվ երևակայության մասին: Ծրագիրն ուսումնասիրելիս ուսանողը ձեռք կբերի տեսական գիտելիքներ, ուսումնական նյութերով ինքնուրույն աշխատելու, ինչպես նաև իր անհատական գործունեության ընթացքում այցելուի հոգեբանական առանձնահատկություններն ուսումնասիրելու հմտություններ և կարողություններ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա** անալիտիկ հոգեբանության հիմնադիր Կ.Գ. Յունգի ստեղծագործական ուղու մասին: Անալիտիկ հոգեբանության հիմնական հասկացությունների մասին: Անձի կառուցվածքային էլեմենտները: Անհատական և կոլեկտիվ անգիտակցական, նրանց բովանդակությունը: Խառնվածքի տիպերը, հոգեկանի չորս ֆունկցիաները: Արխետիպերը: Հոգեբանությունը և ալքիմիան: Կրոնը, քաղաքականությունը Կ.Գ. Յունգի մեկնաբանությամբ:

**2. կկարողանա** հասկանալ արքետիպերի ազդեցությունն անձի ինդիվիդուալացիայի գործընթացում: Կկարողանան մեկնաբանել երազները, ակտիվ երևակայական պատկերները և սիմվոլները, վերլուծել հեքիաթները և դրանք օգտագործել, որպես հոգեթերապիայի գործիքներ:

**3. կտիրապետի** անալիտիկ հոգեթերապիայի գործընթացին, երազատեսության մեկնաբանությանը և հոգեթերապիայում կիրառվող այլ մեթոդների /արտ թերապիա, հեքիաթի թերապիա, ավազի թերապի/:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1**՝ Անալիտիկ հոգեբանության առարկան: Կ.Գ. Յունգի կենսագրությունը և նրա տեսությունը: Ժամանակակից հիմնախնդիրները: **Թեմա 2**՝ Գիտակցական, անգիտակցական, կոլեկտիվ անգիտակցական: Անձի կառուցվածքային

Էլեմենտները: **Թեմա 3**՝ Լիբիդո ( հոգեկան էներգիա): Պրոգրես և ռեգրես, Էնանտիոդրոմիա, փոխհատուցում /компенсация/: **Թեմա 4**՝ Խառնվածքի տիպերը, հոգեկանի ֆունկցիաները ըստ Կ.Գ.Յունզի: **Թեմա 5**՝ Կյանքի փուլերը: Վշտի փուլերը: Ինդիհիդուացիայի փուլեր: **Թեմա 6**՝ Էրոս և Լոզոս Արխետիպային կերպարներ՝ Անիմա/Անիմուս Ստվեր, Պերսոնա: **Թեմա 7**՝ Մեծ մոր արխետիպ Հոր,Բմաստուն ծերունու արխետիպ: **Թեմա 8**՝ Տիեզերական ծառ Տրիքստեր: Ինքնություն/самость/: Մանդալա: **Թեմա 9**՝ Տրանսֆորմացիա/բերրիություն /ինիցացիա/ Quest: **Թեմա 10**՝ „Ակտիվ երևակայություն,,: Աշխատանքը ակտիվ երևակայության մեթոդով: **Թեմա 11**՝ Հեքիաթի թերապիան անալիտիկ հոգեբանությունում; Հեքիաթների և սիմվոլների վերլուծություն: **Թեմա 12**՝ Երազատեսություն և երազների մեկնաբանություն, Երազի մեկնաբանության փուլերը: **Թեմա 13**՝ Անձնական երազների մեկնաբանություն: **Թեմա 14**՝ Ավազի թերապիա Արտ թերապիա անալիտիկ հոգեբանության մեջ: **Թեմա 15**՝ Յունզի սոցիալական և քաղաքական ,կրոնական իդեաները: Առասպելներ: Թեմա 16՝ Անալիտիկ հոգեթերապիայի գործընթացը

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են գրավոր աշխատանքի գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3: 3,5: 3,5 միավոր:

**10/M05. Սոցիալական հոգեբանություն (3 կրեդիտ)**

*Շարաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

<< **Սոցիալական հոգեբանություն >> առարկայի նպատակն է ուսումնասիրել անհատին՝ որպես սոցիալական դերակատարի, ներխմբային փոխներգործությունները, խմբային դինամիկան, դերային վարքի դրսևորումները, միջանձնային փոխհարաբերությունները, հաղորդակցման առանձնահատկությունները, սոցիալական կոնֆլիկտները, դիրքորոշումները և այլ սոցիալ-հոգեբանական երևույթները:**

**Դրված նպատակից բխում են հետևյալ կոնկրետ խնդիրները՝**

1. Ուսումնասիրել այն փաստերը և օրինաչափությունները, որոնք բացահայտում են սոցիալական հոգեբանության առարկան, խնդիրները, մեթոդները:
2. Ներկայացնել սոցիալական հոգեբանության զարգացումն ու տեսությունները:
3. Ուսումնասիրել անհատին՝ որպես սոցիալական դերակատարի:
4. Բացահայտել անձի սոցիալական վարքի տեսակները:
5. Ուսումնասիրել խմբային դինամիկան:
6. Ուսումնասիրել անհատի դիրքն ու ստատուսը, սոցիալական դերատեսակները, դերային կոնֆլիկտները, դիրքորոշումները:
7. Ծանոթացնել սոցիալ-հոգեբանական երևույթների համակարգին:

Ներկայացնել սոցիալական հոգեբանության կիրառական մեծ նշանակությունը:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա** բոլոր փաստերն և օրինաչափությունները, որոնք բացահայտում են սոցիալ- հոգեբանական երևույթները, խմբային դինամիկան, անձի սոցիալականացման ինստիտուտները, սոցիալական վարքի տեսակները, <<Ես>>- կոնցեպցիան և նրա կառուցվածքը, ինչպես նաև սոցիալական կոնֆլիկտները, խոսքային հաղորդակցման տեսակներն և դիրքորոշումների փոփոխությունները, իմացական աններդաշնակության հիմնախնդիրներն ու սոցիալական հոգեբանության կիրառական նշանակությունը:

**2. կկարողանա**

2.1.Գտնել տեղն ու դերը ներխմբային գործունեության ընթացքում, ձևավորել, կայունացնել, և կառավարել միջանձնային փոխհարաբերություններ խմբում:

2.2. Ձևավորել սոցիալական հարաբերություններ և դիրքորոշումներ խմբում:

2.3. Գտնել ուղիներ ներխմբային փոխներգործության ընթացքում առաջացած սոցիալական կոնֆլիկտները հաղթահարելու համար:

2.4. Վերլուծել անձի վարքը, սոցիալական գործընթացները սոցիալական հոգեբանության տեսանկյունից:

2.5. Ներխմբային գործունեության ընթացքում ներազդել անհատի և խմբի վարքի վրա:

**3. կտիրապետի**

3.1. Սոցիալական հոգեբանության հիմնական մեթոդներին և դրանց կիրառմանը՝ մարդկային գործունեության տարբեր ոլորտների ուսումնասիրության գործընթացում:

3.2. Սոցիալ- հոգեբանական և հասարակական հոգեբանական երևույթների փոխազդեցությանը և փոխկապվածությանը, դրանց մեկնաբանմանն և վերլուծությանը, պրակտիկ գործունեության իրականացմանը:

3.3. Անձի և խմբի փոխներգործության, հոգեւոցիալական, իմացական և հոգեֆիզիոլոգիական զարգացման մակարդակը ախտորոշելու ընդունակություն :

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Սոցիալական հոգեբանության ուսումնասիրության առարկան:

**Թեմա 2՝** Սոցիալական հոգեբանության մեթոդները: **Թեմա 3՝** Սոցիալական հոգեբանության կապը այլ գիտությունների հետ: **Թեմա 4՝** Սոցիալական խմբի բնորոշումը:Սոցիալական խմբերի տեսակները: Ռեֆերենտային խմբեր:Մեծ խմբերի տեսակները: **Թեմա 5՝** Ամբոխի հոգեբանություն: Անհատի վարքի առանձնահատկությունները ամբոխի կազմում: **Թեմա 6՝** Զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթներ: **Թեմա 7՝** Հասարակական կարծիքի օբյեկտները և ձևավորման ուղիները: **Թեմա 8՝** Սոցիալական դիրք և ստատուս: Սոցիալական ստատուսի տեսակները:Ինչ է տալիս մարդուն իր սոցիալական դիրքը:Անձի ստատուսի ցուցադրությունը վարքում: **Թեմա 9՝** Սոցիալական դեր:Սոցիալական դեր և թատերական դեր:Դերային կոնֆլիկտներ: **Թեմա 10՝** Անձը և նրա ձևավորման աղբյուրները: **Թեմա 11՝** Անձի հոգեկան գծերը և սոցիալական վարքը:



**Թեմա 12** Ինքնագիտակցություն: Խումբ, դեր և ինքնագիտակցություն: Ընտանիքի և ռեֆերենտային մյուս խմբերի դերը: **Թեմա 13**՝ Արդյոք լավ գիտենք ինքներս մեզ: Ինքնաբացահայտում և ինքնախմայություն: **Թեմա 14**՝ Իմացական աններդաշնակություն:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են գրավոր աշխատանքի գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3,5, 3,5 միավոր:

**10/M06. Տարիքային հոգեբանություն (3 կրեդիտ)**

*Շարաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

**Դասընթացի նպատակն է** ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել Տարիքային և զարգացման հոգեբանության, նրա զարգացման փուլերի, առարկայի, նպատակների, խնդիրների, սկզբունքների, ուղղությունների, Զարգացման պրոցեսների, ոլորտների, Անձի զարգացման տեսությունների, անձի տարբեր տարիքային շրջաններում զարգացման առանձնահատկությունների, զարգացման և փոփոխությունների մեխանիզմների, գործոնների, պայմանների և օրինաչափությունների մասին:

Տվյալ կուրսի ուսուցանումը ենթադրում է մասնագիտական կոմպետենտության ձեռք բերում, գիտա-հոգեբանական նկարագրության և մարդու զարգացման վերլուծության ոլորտում, տարբեր տարիքային փուլերում մարդու զարգացման առանձնահատկությունների մասին գիտելիքների ձևավորում, տեսական գիտելիքների և հմտությունների ձեռքբերում, որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուր տարիքային շրջանի և մարդու հոգեբանական զարգացման օրինաչափությունները օնտոգենեզում ըմբռնելու և հասկանալու համար: Հոգեբանական պրոցեսների զարգացման մասնագիտական ախտորոշման համար: Կրթական ոլորտի աշխատողներին որակավորված հոգեբանական օգնություն տրամադրելու համար:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա** մարդու օնտոգենեզի առանձնահատկությունները, զարգացման նախադրյալները, օնտոգենեզի տարբեր փուլերի առանձնահատկությունները, մարդու ակտուալ և պոտենցիալ հնարավորությունների բացահայտման միջոցները:

**2. կկարողանա** բանավոր և գրավոր խոսքով ներկայացնել իրենց գիտելիքները, համադրել հոգեբանական նոր տեղեկությունները իրենց գիտելիքների հետ, կունենան անհատական գործունեության ընթացքում պրոբլեմային իրադրության տարիքային-հոգեբանական վերլուծության, յուրաքանչյուր տարիքի հոգեբանական պրոցեսների մասնագիտական

ախտորոշման և, ըստ այդմ, նպատակահարմար լուծման մշակման համար անհրաժեշտ հմտություններ և կարողություններ:

**3. կտիրապետի** հոգեբանական գիտելիքները գործնականում կիրառելու մեթոդներին, անձի ներդաշնակ զարգացման ընթացքի ձևավորման, երեխայի անձի զարգացմանը կողմնորոշված դաստիարակության, կյանքի տարբեր ժամանակաշրջաններում հոգեբանական և սոցիալական ադապտացիայի հոգեբանական միջոցներին:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Տարիքային հոգեբանությունը, որպես գիտական: **Թեմա 2՝** Անձի զարգացման տեսություններ: **Թեմա 3՝** Լ. Վիգոտսկին և նրա դպրոցը: **Թեմա 4՝** Երեխայի՝ մանկական հասակում զարգացման օրինաչափությունները և առանձնահատկությունները: **Թեմա 5՝** Վաղ տարիքի հոգեբանական և հոգեւոցիալական բնութագիրը: **Թեմա 6՝** Նախադպրոցական տարիքի հոգեբանական և հոգեւոցիալական բնութագիրը: **Թեմա 7՝** Կրտսեր դպրոցական տարիքի հոգեւոցիալական բնութագիրը: **Թեմա 8՝** Դեռահասության և պատանեկության հոգեւոցիալական բնութագիրը: **Թեմա 9՝** Վաղ հասունության ժամանակաշրջանի հոգեւոցիալական բնութագիրը: **Թեմա 10՝** Չարգացման խնդիրները վաղ հասունության տարիքում: **Թեմա 11՝** Միջին հասունության հոգեւոցիալական բնութագիրը: **Թեմա 12՝** Չարգացման հոգեւոցիալական խնդիրները միջին տարիքում: **Թեմա 13՝** Ուշ հասունության ժամանակահատվածի հոգեւոցիալական բնութագիրը: **Թեմա 14՝** Չարգացման հոգեւոցիալական խնդիրները ուշ հասունության տարիքում:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են գրավոր աշխատանքի գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3: 3,5: 3,5 միավոր:

**10/M09. Կառավարման հոգեբանական տեխնոլոգիաներ (3 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել կառավարման հոգեբանության, ոլորտին վերաբերվող հոգեբանական տեխնոլոգիաների առանձնահատկություններին, առարկայի, նպատակների, խնդիրների, ուսումնասիրության մեթոդների և տեխնիկաների մասին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա** կառավարման հոգեբանական տեխնոլոգիաների հատկությունների, անձնավորության տարբեր կառույցների զարգացման մեխանիզմները, վարքի կարգավորման տարբեր հնարները:

2. **կկարողանա** ներկայացնել իրենց գիտելիքները, համադրել հոգեբանական նոր տեղեկությունները իրենց գիտելիքների հետ, կունենան անհատական գործունեության ընթացքում կառավարման հոգեբանական տեխնոլոգիաների առանձնահատկություններն ուսումնասիրելու հմտություններ և կարողություններ:

3. **կտիրապետի** կառավարման հոգեբանության գիտելիքները գործնականում կիրառելու մեթոդներին, հասարակական ներդաշնակ փոխհարաբերությունների ձևավորման, ուսման, դաստիարակության, աշխատանքային գործունեության արդյունավետության բարձրացման հոգեբանական միջոցներին:

**Բովանդակությունը.**

*Թեմա 1*՝ Կառավարման սոցիալ-հոգեբանական տեխնոլոգիաները: *Թեմա*

*2*՝ Կառավարման սոցիալ-հոգեբանական տեխնոլոգիաների դերն ու նշանակությունը ժամանակակից կազմակերպություններում: *Թեմա 3*՝ Կառավարման սոցիալ-հոգեբանական տեխնոլոգիաների կիրառման խնդիրները: *Թեմա 4*՝ Ավանդույթների վրա հիմնված տեխնոլոգիաներ: *Թեմա 5*՝ Հարկադրման, խրախուսանքի, վախի մթնոլորտի վրա հիմնված իշխանություն: *Թեմա 6*՝ Համոզման տեխնիկաների թույլ և ուժեղ կողմերը: *Թեմա 7*՝ Ղեկավար-ենթակա փոխհարաբերությունների հուզական և սոցիալական կողմերի ձևավորման տեխնոլոգիաներ: *Թեմա 8*՝ Սթրեսակայունության նվազումը որպես բացասական հետևանք կառավարման տեխնոլոգիաների սխալ կիրառման դեպքում:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են գրավոր աշխատանքի գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3,5, 3,5 միավոր:

**10/M15. Հաղորդակցման հոգեբանություն (3 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ծրագրի նպատակն է՝ ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել հաղորդակցման հոգեբանության, նրա զարգացման փուլերի, առարկայի, նպատակների, խնդիրների, սկզբունքների, ուղղությունների, ուսումնասիրության մեթոդների, ինչպես նաև հաղորդակցման տեսությունների, արդյունավետ շփմանը նպաստող անձնային և իրադրային գործոնների, shpman հոգեբանական հիմքերի օրինաչափությունների մասին:

Ծրագիրն ուսումնասիրելիս ուսանողը ձեռք կբերի տեսական գիտելիքներ ուսումնական նյութերով ինքնուրույն աշխատելու, ինչպես նաև սեփական և ուրիշի խոսքային և ոչ խոսքային շփումը վերլուծելու և նպատակահարմար ձևը ընտրելու հմտություններ և կարողություններ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

### **1. կիմանա**

1.1. հաղորդակցման պրոցեսի տարրերը, դրանց փոխկապակցվածությունը արդյունավետ և ոչ արդյունավետ հաղորդակցման բնութագրերը և մեխանիզմները:

1.2. շփման իմացական, հուզական և վարքային ոլորտները, ուրիշ մարդու ընկալելու և ըմբռնելու մեխանիզմները և օրինաչափությունները:

1.3. խոսքային և ոչ խոսքային վարքի փոխկապակցվածությունը, փոխազդեցությունը, նշանակությունը և այլն, թե ինչպես է անդրադառնում հաղորդակցման պրոցեսի վրա:

### **2. կկարողանա**

2.1. վերլուծել միջանձնային փոխներգործությունը, օգտվելով հոգեբանության ժամանակակից մեթոդներով:

2.2. հաղթահարել հաղորդակցման խոչընդոտները, կառուցել սեփական խոսքը ներդաշնակ, համոզիչ կերպով, արդյունավետ օգտագործել խոսքային և ոչ խոսքային միջոցները

2.3. ճանաչել և տարբերակել շփման տարբեր մակարդակները և ստեղծել համագործակցության և փոխըմբռնման մթնոլորտ:

2.4. Մեկնաբանել և վերլուծել ոչ խոսքային վարք:

### **3. կտիրապետի**

3.1. Մի շարք հաղորդակցման տեխնիկաներին և միջոցներին, որոնց օգնությամբ կարելի է ստեղծել կայուն կոնտակտ, բարյացակամ շփման մթնոլորտ:

3.2. Նպատակահարմար բացասական և դրական հետադարձ կապ տալու, ինչպես նաև ասսերտիվ լինելու կարողություններին և ունակություններին:

3.3. Հարցեր տալու և ակտիվ լսելու հոգեբանական միջոցներին:

### **Բովանդակությունը.**

**Թեմա 1**՝ Հաղորդակցման հոգեբանության առարկան, խնդիրներն ու մեթոդները: **Թեմա 2**՝ Հաղորդակցման պրոցես: **Թեմա 3**՝ Շփման փուլեր և մակարդակներ: Շփման պրիմիտիվ և մանիպուլատիվ մակարդակներ: **Թեմա 4**՝ Շփման ստանդարտացված, կոնվենցիոնալ մակարդակներ: **Թեմա 5**՝ Շփման խաղային, գործնական և հոգևոր և մակարդակներ: **Թեմա 6**՝ Առաջին տպավորության ձևավորման մեխանիզմները և օրինաչափությունները: **Թեմա 7**՝ Հետադարձ կապ և ասսերտիվ արձագանքելու հմտություններ: **Թեմա 8**՝ Ուրիշների և սեփական անձի ընկալում: Լսելու ունակություն: **Թեմա 9**՝ Ոչ խոսքային հաղորդակցում: **Թեմա 10**՝ Շփում և միջավայր: Տարածական վարք: **Թեմա 11**՝ Դիրք, ժեստ և հաղորդակցում: **Թեմա 12**՝ Հայացքի և տեսողական կոնտակտի դերը: **Թեմա 13**՝ Հայումների դերը և նշանակությունը: **Թեմա 14**՝ Դեմքի արտահայտության դերը և նշանակությունը:

### **Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են գրավոր աշխատանքի գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

### **Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3,5, 3,5 միավոր:

**10/M16. Ազգային հոգեբանություն (3 կրեդիտ)**

*Շարքայական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Առարկայի նպատակն է ուսումնասիրել էթնիկական խմբերի բնութագրերը, էթնոգենեզի հիմնական փուլերը, միջէթնիկական հարաբերությունների տեսակները, ազգային հոգեկերտվածքը և բնավորությունը, ազգային սիմվոլները և ստերեոտիպերը:

**Դրված նպատակից բխում են հետևյալ կոնկրետ խնդիրները՝**

1. Ուսումնասիրել ազգային խմբի հոգեկան կերտվածքը, ձևավորման փուլերը և օրինաչափությունները:
2. Ուսումնասիրել ազգային բնավորության էությունը և բաղադրիչները, ըստ հոգեկան կերտվածքի և բնավորության տարբեր ազգերի առանձնահատկությունները:
3. Ուսումնասիրել ազգային ինքնագիտակցության կառուցվածքը և ձևավորման փուլերը:
4. Ուսումնասիրել ազգային սիմվոլները, որոնց մեջ խտացված են տվյալ ազգին բնորոշ հոգեկան հատկությունները և աշխարհընկալումը:
5. Ուսումնասիրել կրոնի և ազգային հոգեկերտվածքի փոխներգործությունը:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա** այն փաստերը և օրինաչափությունները, որոնք բացահայտում են ազգային խմբերի հոգեբանական առանձնահատկություններն ընդհանրապես և կոնկրետ ազգերին մասնավորապես:

**2. կկարողանա**

2.1. կապ հաստատել այդ փաստերի և օրինաչափությունների միջև, որոնք վերաբերում են հոգեբանական կողմի ոչ հոգեբանական դրսևորումներին ,

2.2. բացահայտել ազգային բնավորության էությունը և բաղադրիչները , ազգային ինքնագիտակցության կառուցվածքը և ձևավորման փուլերը:

**3. կտիրապետի**

3.1. ազգային սիմվոլների կիրառման հոգեբանական ձևերին և մեթոդներին,

3.2. կրոնի և ազգային հոգեկերտվածքի փոխներգործության հոգեբանական կարգավորման հմտություններին՝ ինչպես կրթական համակարգում, այնպես էլ սոցիալական միջավայրում:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Էթնոս, ազգ և էթնիկական հոգեբանության խնդիրները: **Թեմա 2՝** Էթնիկական ինքնագիտակցություն: **Թեմա 3՝** Մշակույթ և գլոբալ էթնոխմբային ինքնապաշտպանություն: **Թեմա 4՝** Ազգային սիմվոլներ: **Թեմա 5՝** Էթնիկական ստերեոտիպեր: **Թեմա 6՝** Էթնիկական հոգեկերտվածք, ազգային ոգի և բնավորություն:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են գրավոր աշխատանքի գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3: 3,5: 3,5 միավոր:

**10/M18. Տրանսպերտնալ հոգեբանություն (3 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել տրանսպերտնալ հոգեբանության տեսական սկզբունքներին, հիմնական մոտեցումներին ու ուղղություններին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա** տրանսպերտնալ հոգեբանության հարացույցը և զարգացման ուղին,

**2. կծանոթանա** տրանսպերտնալ հոգեբանության առաջացման և ձևավորման հիմնական նախադրյալների և տեսությունների հետ,

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Տրանսպերտնալ հոգեբանության հիմնական դրույթները: **Թեմա 2՝** Ա. Մալոուսոն որպես տրանսպերտնալ հոգեբանության հիմնադիր: **Թեմա 3՝** Է.Սյուտիչ, Ա. Մալոու ու Ս. Գրոֆ՝ հոգեբանության մեջ մեթոդաբանական փոփոխություններ: **Թեմա 4՝** Թ. Կունի գիտական պարադիգմաները: **Թեմա 5՝** Տրանսպերտնալ ապրումները ու բազային պերինատալ մատրիցաներ՝ ըստ Ս.Գրոֆի: **Թեմա 6՝** Ք.Ուիլբերի հոգեբանությունը և պատկերացումները հոգեթերապիայի մասին:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են գրավոր աշխատանքի գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3: 3,5: 3,5 միավոր:

**10/M20. Քաղաքական հոգեբանություն (3 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ծրագրի նպատակն է՝ ուսումնասիրել քաղաքական սոցիալականացման հետ կապված քաղաքական և սոցիալական հոգեբանության մեջ առկա հայտնի հայեցակարգերն ու տեսակետները, ինչպես նաև ուսումնասիրել անձի սոցիալականացման առանձնահատկությունները խմբերում, նաև՝ դիրք,

իշխանություն, հեղինակություն և սոցիալական շարժունության տեսակները: Նպաստել ուսանողների մոտ անձի օգերսոցիալականացում և օթեսոցիալականացում հասկացությունների շուրջ գիտական քննարկումներ կազմակերպելու ունակություններ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1.կլիմանա** ուսումնասիրել քաղաքական գործչի իմիջը, ինքնաներկայացման խոսքային և ոչ խոսքային միջոցները, առաջին տպավորության, ներգործության հոգեբանական մեխանիզմները, որն էլ հնարավորություն կտա ապագա մասնագետ հոգեբանին քաղաքական գործչին ավելի խորը ճանաչելուն,

**2.կկարողանա** բանավոր և գրավոր խոսքով ներկայացնել իրենց գիտելիքները, համադրել հոգեբանական նոր տեղեկությունները իրենց գիտելիքների հետ, կունենան անհատական գործունեության ընթացքում քաղաքական հոգեբանության ոլորտում ուսումնասիրություններ և հոգեբանական աշխատանք կատարելու հմտություններ և կարողություններ,

**3.կտիրապետի** հոգեբանական գիտելիքները գործնականում կիրառելու մեթոդներին, քաղաքական սոցիալականացման հետ կապված քաղաքական և սոցիալական հոգեբանության մեջ առկա հայտնի հայեցակարգերին ու տեսակետներին:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Անձի հոգեբանական բնութագիրը: **Թեմա 2՝** Քաղաքական և սոցիալական հոգեբանության առարկան, նպատակները, խնդիրներն ու մեթոդները: **Թեմա 3՝** Անձի սոցիալականացումը խմբերում: **Թեմա 4՝** Սոցիալական դիրք, դեր և դերակատարման հարմարվողական գործառույթները: **Թեմա 5՝** Քաղաքական ինքնագիտակցություն: **Թեմա 6՝** Լիդերության ֆենոմենը: **Թեմա 7՝** Քաղաքական լիդերությունը: **Թեմա 8՝** Քաղաքական գործչի իմիջը: **Թեմա 9՝** Շփում, հաղորդակցություն: **Թեմա 10՝** Կոնֆլիկտ և հակասություն: **Թեմա 11՝** Բարոյական սոցիալականացում և սոցիալ-հոգեբանական հարմարում:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են գրավոր աշխատանքի գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3,5; 3,5; 3 միավոր:

**10/M21. Շեղվող վարքի հոգեբանություն (3 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ծրագրի նպատակն է՝ մագիստրատուրայի ուսանողներին ծանոթացնել շեղվող վարքի երևույթին, նրանց գիտելիքներ հաղորդել շեղվող վարքի ձևավորման և դրսևորման հոգեբանական առանձնահատկությունների վերաբերյալ, ինչպես նաև նրանց մոտ ձևավորել վարքային շեղումների սոցիալ-հոգեբանական վերլուծության հմտություններ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա**

- 1.1. շեղվող վարքի դեհանտալոգիական մեկնաբանությունը,
- 1.2. շեղվող վարքի ուսումնասիրության միջառարկայական ուղղվածությունը,
- 1.3. շեղվող վարքի վերաբերյալ գոյություն ունեցող տեսական մոտեցումները,

**2. կկարողանա**

- 2.1. կողմնորոշվել անձնային վարքի դրսևորումների սոցիալ-հոգեբանական բնութագրերում,
- 2.2. անձի սոցիալականացումը դիտել որպես մեկ միասնական ուղղագիծ գործընթաց,
- 2.3. հայտնաբերել և բացահայտել շեղվող վարքը՝ որպես ինքնուրույն սոցիալական միավոր,

**3. կտիրապետի**

- 3.1. շեղվող վարքի սոցիալ-հոգեբանական բնութագրերին,
- 3.2. բնորոշել շեղվող վարքը համակողմանի մոտեցումներին,
- 3.3. շեղվող վարքի դրսևորման սոցիալ-պատմական դինամիկայի վերլուծությանը:

**Բովանդակությունը.**

*Թեմա 1՝* Շեղվող վարքի հոգեբանության օբյեկտը, առարկան, մեթոդաբանությունը: *Թեմա 2՝* Դեվիանտալոգիան հումանիտար գիտելիքի համակարգում: *Թեմա 3՝* Նորման առօրյա կյանքում: *Թեմա 4՝* Սոցիալականացումը և նորմերի ամրապնդումը: *Թեմա 5՝* Նորմերի նկատմամբ սոցիալական վերահսկողությունը

*Թեմա 6՝* Շեղվող վարքի կենսաբանական տեսությունները: *Թեմա 7՝* Շեղվող վարքի բացատրությունը անձի հոգեբանության բնագավառում: *Թեմա 8՝* Շեղվող վարքի բացատրությունը սոցիալ-հոգեբանական տեսություններում: *Թեմա 9՝* Անձի հոգեբանական օտարացումը: *Թեմա 10՝* Շեղվող վարքի սոցիալ-հոգեբանական բնորոշումը և հիմնական տեսակները: *Թեմա 11՝* Նախասոցիալական վարքի բնորոշումը:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ ռեֆերատի ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

**10/M24. Սոցիալական ներագդման հոգեբանություն (3 կրեդիտ)**  
*Շարաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**



Ուսումնասիրել ներազդման հոգեբանության տարբեր օրինաչափությունները, այդ թվում կառուցողական և ոչ կառուցողական հակազդման եղանակները, ազդեցության անձնային գործոնները, ինչպես նաև դիտարկել անձի հոգեբանական անվտանգության հիմնահարցերի լուծման միջոցները:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա**

- 1.1. ազդեցության հոգեբանության հիմնական հասկացությունների, ազդեցության եղանակների դասակարգումը,
- 1.2. ազդեցության տարբեր եղանակների, հատկանիշների, չափանիշները,
- 1.3. ազդեցության տարբեր մեխանիզմներն ու, միջոցները,
- 1.4. ազդեցության տարբեր եղանակների արդյունավետության պայմաններն ու կանոնները,

**2. կկարողանա**

- 2.1. զանգվածային տեղեկատվական գործընթացներում ազդեցության եղանակների կիրառության,
- 2.2. շփման ընթացքում մանիպուլյացիաների բնութագրության, մանիպուլյացիաները չեզոքացնելու ընդհանուր կանոնների,
- 2.3. հասկանալ մարդկային վարքագծի հիմքում ընկած հոգեբանական օրինաչափությունները և սկզբունքները,

**3. կտիրապետի**

- 3.1. գիտակցելու սեփական մանիպուլյացիոն ռազմավարությունը,
- 3.2. տիրապետելու կառուցողական ազդեցության եղանակներին, կոնկրետ տեխնոլոգիաներին և միջոցներին,
- 3.3. տարբեր եղանակների օգնությամբ մշակելու մանիպուլյացիաներին դիմակայելու վարքագիծ,

**Բովանդակությունը.**

**Թեմա 1**՝ Մարդու հոգեկանը և սոցիալ-հոգեբանական ազդեցությունը:  
**Թեմա 2**՝ Ներազդման նպատակները: Հոգեբանական ներազդում և հոգեբանական ներգործություն Հոգեբանական անվտանգության խնդիրը ժամանակակից հասարակության մեջ: **Թեմա 3**՝ Ներազդման բարոյական և հոգեբանական կողմերը: Հոգեբանական ներազդում և հոգեբանական տարածք: Ներազդման միջոցները: Քաղաքակիրթ հոգեբանական ներազդում: **Թեմա 4**՝ Հոգեբանական ներազդման տեսակները: **Թեմա 5**՝ Հոգեբանական ներազդման եղանակները, միջանձնային պերցեպցիայի մեխանիզմները: **Թեմա 6**՝ Ներազդման սկզբունքները, մեխանիզմները, ավտոմատիզմները: **Թեմա 7**՝ Մանիպուլյացիայի սահմանումը, դրսևորումները, տեսակները: **Թեմա 8**՝ Հոգեբանական ներազդման ոչ քաղաքակիրթ, ապակառուցողական մեթոդները: **Թեմա 9**՝ Ներազդման քաղաքակիրթ, կառուցողական հակաազդում: **Թեմա 10**՝ Խմբի ազդեցությունը անձի վրա: Հարմարվողականության (կոնֆորմիզմ) ըմբռնումը սոցիալական հոգեբանության մեջ: **Թեմա 11**՝ Սոցիալական դիրքորոշումներ. դրանց ձևավորման գործընթացը: **Թեմա 12**՝ Հոգեբանական ներազդումը զանգվածային տեղեկատվական գործընթացներում:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի

գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ ռեֆերատի ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

**10/M28. Կոնֆլիկտաբանություն (3 կրեդիտ)**

*Շարթթայական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ծրագրի նպատակն է՝ ուսումնական գործունեության ընթացքում մագիստրանտին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել կոնֆլիկտաբանության զարգացման պատմության, հիմնական հոգեբանական տեսությունների, ուսումնասիրության մեթոդների, առարկայի հիմնական հասկացությունների, կոնֆլիկտի տեսակների, կառուցվածքի, դինամիկայի, պատճառների և հաղթահարման եղանակների մասին: Հատուկ ուշադրություն է դարձվում մագիստրանտի գործնական պատրաստմանը: Դասընթացը ունի գործնական ուղղվածություն և նախատեսում է տեսական գիտելիքների կիրառումը մարդկային փոխազդեցության տարբեր ոլորտներում կոնֆլիկտների կանխարգելման, կառավարման և կարգավորման կառուցողական ռազմավարությունների մշակման, բանակցությունների և խորհրդատվության միջոցով կոնֆլիկտի հաղթահարման գործում:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա** կոնֆլիկտների հիմնական հասկացությունները և կատեգորիաները, ժամանակակից աշխարհում գործող կոնֆլիկտների հայեցակարգերը, ինչպես նաև կոնֆլիկտային վարքի ռազմավարությունները:

**2. կկարողանա** ստացված գիտելիքները օգտագործել պրակտիկ գործունեության մեջ, կատարել ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք, վերլուծության ենթարկել կոնֆլիկտները, դրանց ծագման աղբյուրները և գտնել կոնֆլիկտի հաղթահարման տարբերակները:

**3. կտիրապետի** արդյունավետ բանակցությունների համար անհրաժեշտ հմտությունների և կոնֆլիկտային իրավասությանը:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1**՝ Կոնֆլիկտաբանությունը որպես գիտություն: Նրա առարկան և մեթոդները: **Թեմա 2**՝ Կոնֆլիկտաբանության տեսական հիմքերը: Սոցիալական կոնֆլիկտի տեսություններ: **Թեմա 3**՝ Ներանձնային կոնֆլիկտները հոգեբանական տարբեր հայեցակարգային մոտեցումներում: **Թեմա 4**՝ Կոնֆլիկտի ընդհանուր բնութագիրը: Կոնֆլիկտի կառուցվածքը և դինամիկան: **Թեմա 5**՝ Կոնֆլիկտազենները և դրանց սկզբնապատճառները: **Թեմա 6**՝ Միջանձնային կոնֆլիկտներ: Ներանձնային և միջանձնային կոնֆլիկտների փոխազդեցությունը: **Թեմա 7**՝ Կոնֆլիկտների ախտորոշումը, կանխարգելումը և հաղթահարումը: **Թեմա 8**՝ Վարքի ստրատեգիաները կոնֆլիկտի ժամանակ: **Թեմա 9**՝ Միջմարտային, քաղաքական, միջլեռնիկ, միջպետական կոնֆլիկտներ: **Թեմա 10**՝ Կոնֆլիկտի լուծմանը ուղղված արդյունավետ բանակցությունների հոգեբանություն: Թեմա

11 Կոնֆլիկտը ընտանիքում, հիմնական տեսակները և պատճառները : **Թեմա**  
12 Կոնֆլիկտային անձանց տիպերը և նրանց հետ շփվելու կանոնները : **Թեմա**  
13 Կոնֆլիկտային վարքի իրավասություն : **Թեմա** 14 Կոնֆլիկտային իրադրություններ, քննարկումներ, խաղեր, մարզումներ :

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ ռեֆերատի ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3; 3,5; 3,5 միավոր:

**10/M30. Իշխանության և լիդերության հոգեբանություն (3 կրեդիտ)**

*Շարաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ծրագրի նպատակն է՝ ուսումնական գործունեության ընթացքում մագիստրանտին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել լիդերության հոգեբանության զարգացման պատմության, ուսումնասիրության մեթոդների, լիդերության հիմնական հոգեբանական դպրոցների և տիպաբանությունների, իշխանության հոգեբանության, ինչպես նաև լիդերի իմիջի կերտման և մատուցման ժամանակակից դրսևորումների մասին: Հատուկ ուշադրություն է դարձվում մագիստրանտի գործնական պատրաստմանը: Դասընթացը ունի գործնական ուղղվածություն և նախատեսում է տեսական գիտելիքները փորձարկել՝ կատարելով վերլուծություններ, քննարկումներ, խորհրդատվություններ և իրականացնելով որևէ քաղաքական գործչի կամ կուսակցության իմիջի ինքնուրույն հետազոտություն, ներկայացնել այն շտկող մանրամասն ծրագիր:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա** լիդերության ուսումնասիրության պատմությունը և մեթոդները, հիմնական հոգեբանության դպրոցները և տիպաբանությունները, արդյունավետ լիդերության հոգեբանական առանձնահատկությունները, ղեկավարին հաջողություն բերող անձնային հատկությունները և դրանց կատարելագործման ուղիները, հետևորդների տիպաբանությունն ու սոցիալ-հոգեբանական բնութագիրը.

**2. կկարողանա** կիրառելով ստացած գիտելիքները՝ հոգեբանական խորհրդատվություն իրականացնել կազմակերպություններում արդյունավետ լիդերության որակներ ունեցող ղեկավարներ ընտրելու գործում, ինչպես նաև մոնիտորինգ անել և հետազոտել քաղաքական լիդերների իմիջային կերպարները, վարքաձևերը և գործունեությունը, կանխատեսել և մոդելավորել նրանց կառավարման արդյունավետությունը:

**3. կտիրապետի** լիդերության տիպերի, իրադրության և ղեկավարման արդյունավետ ոճերի ընտրության առանձնահատկություններին, ղեկավարի և լիդերի տարբերություններին, կին և տղամարդ լիդերների իմիջային կերպարների

դրսևորումներին, ավտորիտար և դեմոկրատ ղեկավարների հոգեբանական որակներին, իշխանության հոգեբանությանը:

**Բովանդակությունը.**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3: 3,5: 3,5 միավոր:

**10/M18. Տրանսպերսոնալ հոգեբանություն (3 կրեդիտ)**

*Շարքաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել տրանսպերսոնալ հոգեբանության տեսական սկզբունքներին, հիմնական մոտեցումներին ու ուղղություններին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիմանա** տրանսպերսոնալ հոգեբանության հարացույցը և զարգացման ուղին

2. **կծանոթանա** տրանսպերսոնալ հոգեբանության առաջացման և ձևավորման հիմնական նախադրյալների և տեսությունների հետ

**Բովանդակությունը.**

*Թեմա 1՝* Տրանսպերսոնալ հոգեբանության հիմնական դրույթները:

*Թեմա 2՝* Ա. Մասլոուն որպես տրանսպերսոնալ հոգեբանության հիմնադիր: *Թեմա*

*3* Է.Սյուտիչ, Ա. Մասլոու ու Ս. Գրոֆ.՝ հոգեբանության մեջ մեթոդաբանական

փոփոխություններ: *Թեմա 4՝* Թ. Կունի գիտական պարադիգմաները: *Թեմա 5՝*

Տրանսպերսոնալ ապրումները ու բազային պերինատալ մատրիցաներ՝ ըստ

Ս.Գրոֆի: *Թեմա 6՝* Ք.Ուիլբերի հոգեբանությունը և պատկերացումները

հոգեթերապիայի մասին:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են գրավոր աշխատանքի գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3: 3,5: 3,5 միավոր:

**10/M19. Սուիցիդալ վարքի հոգեբանություն (3 կրեդիտ)**

*Շարքաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ծրագրի նպատակն է՝ ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել սուիցիդալ վարքի հոգեբանության, նրա զարգացման փուլերի, առարկայի, նպատակների, խնդիրների, սկզբունքների, ուղղությունների, ուսումնասիրության մեթոդների,



ինչպես նաև ինքնասպանության մեկնաբանման տեսությունների, ինքնասպանության պատճառ հանդիսացող անձնային և իրադրային գործոնների, հոգեբանական հիմքերի օրինաչափությունների մասին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա**

1.1. Սուիցիդոլոգիայի՝ որպես գիտության, ուսումնասիրման առարկան, ինդիքները,

1.2. Սուիցիդալ վարքի դրսևորումները,

1.3. Ինքնասպանության տեսակները մարդկության պատմական զարգացման ընթացքում,

1.4. Սուիցիդի հիմնական առանձնահատկությունները, կառուցվածքը, գործոնները, տիպերը,

1.5. Համաշխարհային կրոնների վերաբերմունքը ինքնասպանության երևույթի նկատմամբ:

**2. կկարողանա** իրականացնել սուիցիդի հոգեբանական վերլուծությունը, անձնային իմաստի բացահայտումը: Սուիցիդենտի հոգեբանական աուտոպսիայի ռետրոսպեկտիվ վերլուծություն, ինչպես նաև ինքնասպանության փորձ կատարած անձանց ուսումնասիրություն: Բնութագրել սուիցիդենտների անձին բնորոշ հոգեբանական որակները: Սուիցիդալ վարքի տիպերը: Մեկնաբանել ինքնասպանության վերաբերյալ վիճակագրական տվյալները: Ուսումնասիրել և հետազոտել՝ սուիցիդենտների թողած նախասուիցիդալ երկտողերը, գրաֆիկական պատկերների առանձնահատկությունները: Կիրառել սուիցիդի կանխարգելման (պրոֆիլակտիկայի) և համապատասխան խմբերի անձանց ռեաբիլիտացիայի և ռեադապտացիայի համար մի շարք տեխնիկաներ:

**3. կտիրապետի** սուիցիդի սոցիալ-հոգեբանական ոչ խիտաբանական բնույթի, ինչպես նաև սահմանային վիճակներով, և գիտակցության, և ուշադրության նեղացմամբ պայմանավորված ինքնասպանությունների հոգեբանական մեխանիզմների բացահայտմանը և նորովի մեկնաբանմանը: Սուիցիդի հիմնահարցի վերլուծությանը փիլիսոփայության, անթրոպոլոգիայի, սոցիոլոգիայի, գենետիկայի, կենսաքիմիայի, էկոլոգիայի, հոգեբուժության և հոգեբանության տեսանկյուններից:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Պատմական ակնարկ ինքնասպանության հիմնահարցի մասին:

**Թեմա 2՝** Սուիցիդի մեկնաբանումը կրոնների տեսանկյունից: **Թեմա 3՝**

Ինքնասպանության քրեաիրավական ասպեկտները: **Թեմա 4՝** Սուիցիդի

բնորոշումը և սուիցիդալ վարքի դրսևորումները: **Թեմա 5՝** Ինքնասպանության

հիմնահարցի մեկնաբանման տեսությունները: **Թեմա 6՝** Սուիցիդի հոգեբանական

վերլուծությունը: **Թեմա 7՝** Սուիցիդը որպես անչափահասների շրջանում շեղվող

վարքի դրսևորման ձև: **Թեմա 8՝** Ինքնասպանի անձին բնորոշ որոշ հոգեբանական

որակների մեկնաբանությունը: **Թեմա 9՝** Ինքնասպանության վիճակագրական

մեկնաբանությունը: **Թեմա 10՝** Ինքնասպանների գրաֆիկական պատկերների

յուրահատկությունները: **Թեմա 11՝** Ինքնասպանների նախասուիցիդալ երկտողերի

հոգեբանական մեկնաբանությունը: **Թեմա 12՝** Սուիցիդի կանխարգելման ուղիները

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են գրավոր աշխատանքի գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

### **Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3,5; 3,5; 3 միավոր:

### **10/M21. Շեղվող վարքի հոգեբանություն (3 կրեդիտ)**

*Շարաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

#### **Նպատակը.**

Ծրագրի նպատակն է՝ մագիստրատուրայի ուսանողներին ծանոթացնել շեղվող վարքի երևույթին, նրանց գիտելիքներ հաղորդել շեղվող վարքի ձևավորման և դրսևորման հոգեբանական առանձնահատկությունների վերաբերյալ, ինչպես նաև նրանց մոտ ձևավորել վարքային շեղումների սոցիալ-հոգեբանական վերլուծության հմտություններ:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

##### **1. կիմանա**

- 1.1. Շեղվող վարքի դևիանտալոգիական մեկնաբանությունը,
- 1.2. Շեղվող վարքի ուսումնասիրության միջառարկայական ուղղվածությունը,
- 1.3. Շեղվող վարքի վերաբերյալ գոյություն ունեցող տեսական մոտեցումները,

##### **2. կկարողանա**

- 2.1. Կողմնորոշվել անձնային վարքի դրսևորումների սոցիալ-հոգեբանական բնութագրերում,
- 2.2. Անձի սոցիալականացումը դիտել որպես մեկ միասնական ուղղագիծ գործընթաց,
- 2.3. Հայտնաբերել և բացահայտել շեղվող վարքը՝ որպես ինքնուրույն սոցիալական միավոր,

##### **3. կտիրապետի**

- 3.1. Շեղվող վարքի սոցիալ-հոգեբանական բնութագրերին,
- 3.2. Բնորոշել շեղվող վարքը համակողմանի մոտեցումներին,
- 3.3. Շեղվող վարքի դրսևորման սոցիալ-պատմական դինամիկայի վերլուծությանը:

#### **Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Շեղվող վարքի հոգեբանության օբյեկտը, առարկան, մեթոդաբանությունը: **Թեմա 2՝** Դեվիանտալոգիան հումանիտար գիտելիքի համակարգում: **Թեմա 3՝** Նորման առօրյա կյանքում: **Թեմա 4՝** Սոցիալականացումը և նորմերի ամրապնդումը: **Թեմա 5՝** Նորմերի նկատմամբ սոցիալական վերահսկողությունը: **Թեմա 6՝** Շեղվող վարքի կենսաբանական տեսությունները: **Թեմա 7՝** Շեղվող վարքի բացատրությունը անձի հոգեբանության բնագավառում: **Թեմա 8՝** Շեղվող վարքի բացատրությունը սոցիալ-հոգեբանական տեսություններում: **Թեմա 9՝** Անձի հոգեբանական օտարացումը: **Թեմա 10՝** Շեղվող

վարքի սցիալ-հոգեբանական բնորոշումը և հիմնական տեսակները: *Թեմա 11*  
Նախասոցիալական վարքի բնորոշումը:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ ռեֆերատի ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

**10/M23. Հեքիաթաթերապիա (3 կրեդիտ)**

*Շարձական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ուսումնական գործունեության ընթացքում ուսանողներին հաղորդել համակարգային գիտելիքներ ժամանակակից հեքիաթաթերապիայի հիմնական սկզբունքների և ուղղությունների մասին, իրենց զարգացման պատմական, մեթոդական, տեսական և գործնական առումներով:

Հոգեկան և հոգեբանական առողջության խնդիրները հանդիսանում են կիրառական հոգեբանության հիմնական էությունը: Հոգեբանական օգնությանն ուղղված մասնագիտական կարողությունների և գիտելիքների համակարգում կենտրոնական տեղ է գրավվում հոգեթերապևտիկ գիտելիքները: Պրակտիկ հոգեբանի մասնագիտական ինքնության ձևավորումն, ծանոթացնել ուսանողներին տարբեր հոգեթերապևտիկ ուղղություններին, նրանց հիմնական առանձնահատկություններին և տարբերություններին:

Ծրագիրն ուսումնասիրելիս ուսանողը ձեռք կբերի տեսական գիտելիքներ ուսումնական նյութերով ինքնուրույն աշխատելու, ինչպես նաև իր անհատական գործունեության ընթացքում այցելուների հետ աշխատելու հոգեբանական հմտություններ և կարողություններ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա** անհատական և խմբային հեքիաթաթերապիայի կայացման պատմությունը, հոգեբանի աշխատանքի առանձնահատկությունները տարբեր փուլերում, մասնագիտական էթիկայի և դեոնոթոլոգիայի կանոնները:

**2. կկարողանա** բանավոր և գրավոր խոսքով ներկայացնել իրենց գիտելիքները, համադրել հոգեբանական նոր տեղեկությունները իրենց գիտելիքների հետ, կունենան այցելուի հետ աշխատելու սկզբնական հմտություններ և կարողություններ, տարբերել հոգեբանական ուղղությունները և մոտեցումները:

**3. կտիրապետի** հոգեբանական գիտելիքները գործնականում կիրառելու մեթոդներին, հասարակական ներդաշնակ փոխհարաբերությունների ձևավորման, այցելուի հետ աշխատանքում անհրաժեշտ հոգեթերապևտիկ միջոցներին:

**Բովանդակությունը.**

*Թեմա 1*՝ Ներածություն: Հեքիաթաթերապիայի սահմանումը: Հեքիաթաթերապևտի մասնագիտական էթիկան և դեոնոթոլոգիան: *Թեմա 2*

Հոգեվերլուծական հեքիաթաթերապիա: Ջ.Ֆրոյդի հոգեվերլուծություն: Կ.Գ. Յունգի անալիտիկ հոգեբանություն: Ա.Ադլերի անձնային հեքիաթաթերապիա: Ռ. Ասադժուլի հոգեսինթեզը: Կ.Հորնիի ինքնավերլուծությունը: **Թեմա 3**՝ Գեշտալտ հոգեբանություն և հեքիաթաթերապիա: **Թեմա 4**՝ Տրանսակտ Վերլուծություն: **Թեմա 5**՝ Հումանիստական հոգեբանություն և հեքիաթաթերապիա: **Թեմա 6**՝ Իմացական և վարքաբանական հոգեբանություն և հեքիաթաթերապիա: **Թեմա 7**՝ Մեդիտատիվ հեքիաթաթերապիա: **Թեմա 8**՝ Հեքիաթաթերապիա

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ ռեֆերատի ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

**10/M24. Սոցիալական ներազդման հոգեբանություն (3 կրեդիտ)**

*Շարաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ուսումնասիրել ներազդման հոգեբանության տարբեր օրինաչափությունները, այդ թվում կառուցողական և ոչ կառուցողական հակազդման եղանակները, ազդեցության անձնային գործոնները, ինչպես նաև դիտարկել անձի հոգեբանական անվտանգության հիմնահարցերի լուծման միջոցները:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա**

- 1.1. ազդեցության հոգեբանության հիմնական հասկացությունների, ազդեցության եղանակների դասակարգումը,
- 1.2. ազդեցության տարբեր եղանակների, հատկանիշների, չափանիշները,
- 1.3. ազդեցության տարբեր մեխանիզմներն ու միջոցները,
- 1.4. ազդեցության տարբեր եղանակների արդյունավետության պայմաններն ու կանոնները,

**2. կկարողանա**

- 2.1. զանգվածային տեղեկատվական գործընթացներում ազդեցության եղանակների կիրառության,
- 2.2. շփման ընթացքում մանիպուլյացիաների բնութագրության, մանիպուլյացիաները չեզոքացնելու ընդհանուր կանոնների,
- 2.3. հասկանալ մարդկային վարքագծի հիմքում ընկած հոգեբանական օրինաչափությունները և սկզբունքները,

**3. կտիրապետի**

- 3.1. գիտակցելու սեփական մանիպուլյացիոն ռազմավարությունը,
- 3.2. տիրապետելու կառուցողական ազդեցության եղանակներին, կոնկրետ տեխնոլոգիաներին և միջոցներին,

3.3. տարբեր եղանակների օգնությամբ մշակելու մանիպուլյացիաներին դիմակայելու վարքագիծ:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1**՝ Մարդու հոգեկանը և սոցիալ-հոգեբանական ազդեցությունը: **Թեմա 2**՝ Ներազդման նպատակները: Հոգեբանական ներազդում և հոգեբանական ներգործությունն Հոգեբանական անվտանգության խնդիրը ժամանակակից հասարակության մեջ: **Թեմա 3**՝ Ներազդման բարոյական և հոգեբանական կողմերը: Հոգեբանական ներազդում և հոգեբանական տարածք: Ներազդման միջոցները: Քաղաքակիրթ հոգեբանական ներազդում: **Թեմա 4**՝ Հոգեբանական ներազդման տեսակները: **Թեմա 5**՝ Հոգեբանական ներազդման եղանակները, միջանձնային պերցեպցիայի մեխանիզմները: **Թեմա 6**՝ Ներազդման սկզբունքները, մեխանիզմները, ավտոմատիզմները: **Թեմա 7**՝ Մանիպուլյացիայի սահմանումը, դրսևորումները, տեսակները: **Թեմա 8**՝ Հոգեբանական ներազդման ոչ քաղաքակիրթ, ապակառուցողական մեթոդները: **Թեմա 9**՝ Ներազդման քաղաքակիրթ, կառուցողական հակաազդում: **Թեմա 10**՝ Խմբի ազդեցությունը անձի վրա: Հարմարվողականության (կոնֆորմիզմ) ըմբռնումը սոցիալական հոգեբանության մեջ: **Թեմա 11**՝ Սոցիալական դիրքորոշումներ. դրանց ձևավորման գործընթացը: **Թեմա 12**՝ Հոգեբանական ներազդումը զանգվածային տեղեկատվական գործընթացներում

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ ռեֆերատի ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

**10/M25. Հոգեբուժություն (3 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Տալ ուսանողներին ներոտիկ, սոմատոֆորմ և սթրեսով պայմանավորված խանգարումների, ինչպես նաև շիզոֆրենիայի, շիզոտիպիկ և այլ զառանցանքային խանգարումների վերաբերյալ (տեսությունների, կլինիկական ձևերի, ախտաբանական դրսևորումների, զարգացման, բուժական մոտեցումների) խորացված գիտելիքներ և հմտություններ համապատասխան հոգեբուժության արդի գիտական նվաճումների Այդ գիտելիքների և հմտությունների ձեռքբերումն ու կիրառումը կարևոր նախապայման են հանդիսանում մասնագետ-հոգեբանի կողմից համապատասխան իրավիճակներում մասնագիտական եզրակացություն կազմելու, որակավորում տալու, նաև թերապևտիկ միջոցառումներ նախաձեռնելու հնարավորություն:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա** ներոտիկ մակարդակի խանգարումների և շիզոֆրենիայի պատճառագիտությունը, ախտածնության օրինաչափությունները, կլինիկական

բնութագրերը, պատկերը, կլինիկական ձևերը, ինչպես նաև թերապևտիկ մոտեցումները:

**2. կկարողանա** տարբերակել շիզոֆրենիայի կլինիկական ձևերը, տարբերակել շիզոֆրենիան այլ փսիխոտիկ խանգարումներից

**3. կտիրապետի** շիզոֆրենիկ բնույթի և ներոտիկ մակարդակի խանգարումների ախտորոշման մեթոդներին և գնահատմանը:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1**՝ Շիզոֆրենիայի սահմանումը: Շիզոֆրենիա. պորբլեմի արդի վիճակը, էպիդեմիոլոգիան, էթջոլոգիան և պաթոգենեզը: Շիզոֆրենիայի տեղը ընդհանուր հոգեբուժության մեջ: **Թեմա 2**՝ Շիզոֆրենիայի նախակլինիկական և կլինիկական դրսևորումները: Շիզոֆրենիայի հոգեբանական, բժշկական և սոցիալական հետևանքները: Ռիսկի խմբերը: Շիզոֆրենիա և անձ: Շիզոֆրենիայի կանխարգելումը: Վաղաժամ ներխուժման մոդելները: **Թեմա 3**՝ Պրոդրոկտիվ և նեգատիվ ախտանիշներ: Շիզոֆրենիայի զարգացման կլինիկական կոնցեպցիաները՝ Կրեպելին, Բլեյեր, Շնայդեր և այլ: Շիզոֆրենիայի կլինիկան՝ մտածողության, հուզականության և կամային խանգարումները: **Թեմա 4**՝ Շիզոֆրենիայի կլինիկական ձևերը: Պարանոիդ կամ գառանցանքային շիզոֆրենիա: Հեբեֆրենիկ շիզոֆրենիա: Կատատոնիկ շիզոֆրենիա: Հասարակ շիզոֆրենիա: Մնացորդային շիզոֆրենիա: Հետշիզոֆրենային դեպրեսիա: Զտարբերակված շիզոֆրենիա: **Թեմա 5**՝ Շիզոֆրենիայի կլինիկական ընթացքի հիմնական ձևերը: Շիզոֆրենիայի տարիքային առանձնահատկությունները: Շիզոֆրենիայի բուժման ժամանակակից մոտեցումները: Հակափսիխոտիկներ, անտիդեպրեսանտներ, անքսիոլիտիկներ: **Թեմա 6**՝ Շիզոտիպիկ խանգարումներ: Խրոնիկական գառանցանքային խանգարումներ՝ պարանոյա (խանդի, հետապնդման, ռեֆորմացիայի, գյուտարարության): **Թեմա 7**՝ Սուր եւ անցողիկ փսիխոտիկ խանգարումներ՝ կլինիկա, դասակարգում, ախտորոշում Փսիխոզեն պարանոիդ: Ռեակտիվ դեպրեսիա: Ռեակտիվ հայուցինոզ: Սուր աֆեկտիվ ռեակցիաներ՝ աֆեկտիվ ստուպոր, աֆեկտիվ գրգռվածություն **Թեմա 8**՝ Շիզոֆրենանման խանգարումներ. փսևոդոէմենցիա, պուէրիլիզմ, Հանզերի համախտանիշ, Ինդուկցված գառանցական խանգարում. ախտորոշում, դասակարգում: Շիզոաֆեկտիվ խանգարումներ. ախտորոշում, դասակարգում **Թեմա 9**՝ Ներոտիկ խանգարումների որոշ տեսական հիմնահարցեր: «Ներոզ» և «ներոտիկ խանգարում» հասկացությունները: Ներոտիկ խանգարումների կլինիկական բազմազանությունը: Ներոզ և անձ փոխհարաբերությունները: Ներոտիկ խանգարումների երեք մակարդակները: **Թեմա 10**՝ Ներոտիկ խանգարումների համաճարակաբանությունը և պատճառագիտությունը՝ գենետիկական գործոններ, մանկական տարիքի գործոններ, բնավորության ներոտիկ գծեր, միջավայրի գործոններ, կյանքի անբարենպաստ իրադարձություններ: **Թեմա 11**՝ Փոքր ներոտիկ խանգարումներ՝ կլինիկական հիմնական ախտանշանները: **Թեմա 12**՝ Ներոտիկ խանգարումների ժամանակակից դասակարգումը, տեսակները՝ կլինիկա, դիագնոստիկա, բուժում: Ներառթենիա: Օբսեսիվ կոմպուլսիվ խանգարումներ: Դեպերսոնալիզացիայի-դեռեալիզացիայի համախտանիշ: Տազնապային խանգարումներ: Դիսոցիացված (հիստերիկ) խանգարումներ: **Թեմա 13**՝ Սոմատոֆորմ խանգարումներ: Սոմատիզացիան ինչպես ընդհանուր բժշկագիտական և հոգեբուժական հիմնախնդիր: Փսիխոսոմատիկ կոնցեպցիա: Սոմատոֆորմ խանգարումների

կլինիկական տեսակները, յուրահատկությունները: Հիպոխոնդրիա և նոզոֆոբիա: **Թեմա 14**՝ Ծանր սթրեսի հակազդման և հարմարվողականության խանգարումներ: Սթրեսի կոնցեպցիան և հետսթրեսային խանգարումներ՝ սոմատիկ, հոգեկան և սոցիալական հակազդման տեսակները: Սթրես հասկացությունը: Սթրեսի դասակարգումը և նրա դրսևորումները: **Թեմա 15**՝ Հետսթրեսային խանգարումներ՝ սուր սթրեսային ռեակցիա, նոզոզեն ռեակցիաներ, հետտրավմատիկ սթրեսային խանգարում, անձի հետտրավմատիկ զարգացում, հարմարվողականության խանգարում: **Թեմա 16**՝ Հոգեբուժության և ընդհանուր բժշկության որոշ առնչություններ: Մարմնական ախտանիշներով դրսևորվող հոգեկան խանգարումներ: Սիմուլյացիա, Պաթոմիմիկրիկ խանգարումներ, Մարմնական հիվանդության հոգեբանական և հոգեախտաբանական հետևանքները: Ընդհանուր պրակտիկայում տարածված հոգեախտաբանական և մարմնական համախտանիշներ: Ցավի համախտանիշ, Հոգեծին փսիում, Նյարդային անորեքսիա, Նյարդային բուլիմիա և այլն:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ ռեֆերատի ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

**10/M26. Կոգնիտիվ վարքային հոգեթերապիա (3 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

**Ծրագրի նպատակն** է՝ կոգնիտիվ-վարքաբանական հոգեթերապիայի ոճի յուրացումն է և հիմնարար տեխնիկաների ինքնուրույն կիրառման հմտությունների ձևավորումը:

Դասընթացի արդյունքում ուսանողները ձեռք կբերեն ամբողջական պատկերացում կոգնիտիվ հոգեթերապիայի ոճի և ընթացքի վերաբերյալ, ինքնուրույն կփորձարկեն մի ամբողջ շարք տեխնիկական հնարներ և կկարողանան ինքնուրույն ծրագրել հոգեթերապևտիկ աշխատանքի անհրաժեշտ մարտավարությունները:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա**

- 1.1. Կոգնիտիվ հոգեթերապիայի հիմնական գաղափարները
- 1.2. Ա.Բեկի պաթոլոգիկ անձի տեսությունը:
- 1.3. Հուզական խանգարումների կոգնիտիվ բովանդակությունը:
- 1.4. Կոգնիտիվ թերապիայի հիմնական ստրատեգիաները, փուլերը և սխեման:
- 1.5. Մտածողության, վարքի և հուզերի փոխկապակցվածությունը
- 1.6. Մտածողության աղճատումները:

1.7. Կոզնիտիվ տեխնիկաներ. Բացերի լրացում, դեկատաստրոֆիզացիա, ռեատրիբուցիա, վերասահմանում, ապակենտրոնացում, վիճարկում, կոզնիտիվ վերակառուցում, տնային աշխատանքներ և այլն:

1.8. Աշխատանք ավտոմատիկ մտքերի հետ:

## **2. կկարողանա**

Բանավոր և գրավոր խոսքով ներկայացնել իրենց գիտելիքները, համադրել հոգեբանական նոր տեղեկությունները իրենց գիտելիքների հետ, կունենան անհատական գործունեության ընթացքում կոզնիտիվ ուղղությամբ հոգեթերապևտիկ աշխատանք կատարելու հմտություններ և կարողություններ:

## **3. կտիրապետի**

Հոգեբանական գիտելիքները գործնականում կիրառելու մեթոդներին, կոզնիտիվ տեխնիկաներն արդյունավետ օգտագործելու հնարներին, ինչպես նաև այցելու-հոգեբան հարաբերություններ արդյունավետ կառուցելու հոգեբանական միջոցներին:

### **Բովանդակությունը.**

*Թեմա 1*՝ Կոզնիտիվ հոգեթերապիայի ընդհանուր նկարագրություն: *Թեմա 2*՝ Ա.Էլիսի ներդրումը թերապիայում: *Թեմա 3*՝ Ներոտիկի կողքս, աղեկվա-անաղեկվատ հույզեր: *Թեմա 4*՝ Ա.Բեկի ներդրումը կոզնիտիվ թերապիայում: *Թեմա 5*՝ Կոզնիտիվ հոգեթերապիայի գլխավոր թիրախները: *Թեմա 6*՝ Տիպական փոխհատուցող ստրատեգիաներ: *Թեմա 7*՝ Անձնային խանգարումներ: *Թեմա 8*՝ Թերապիայի կառուցվածքը և փուլերը: *Թեմա 9*՝ Կոզնիտիվ հոգեթերապիայի հիմնական տեխնիկաները: *Թեմա 10*՝ Էմպաթիա: Ապրումակցում: *Թեմա 11*՝ Կոզնիտիվ հոգեթերապիայի կիրառման առանձնահատկությունները: *Թեմա 12*՝ Կոզնիտիվ հոգեթերապիայի հիմնական սահմանափակումները:

### **Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

### **Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

## **10/M32. Միջանձնային հարաբերությունների և բանակցությունների վարման հոգեբանություն (3 կրեդիտ)**

*Շարաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

### **Նպատակը.**

Ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել միջանձնային հարաբերությունների և բանակցությունների վարման հոգեբանական առանձնահատկություններին, առարկայի, նպատակների, խնդիրների, ուսումնասիրության մեթոդների և տեխնիկաների մասին:

Օրագիրն ուսումնասիրելիս ուսանողը ձեռք կբերի տեսական գիտելիքներ ուսումնական նյութերով ինքնուրույն աշխատելու, ինչպես նաև իր միջանձնային հարաբերությունների և բանակցությունների վարման ոլորտի գործունեության



ընթացքում անհրաժեշտ սոցիալ-հոգեբանական տեխնիկաների և տեխնոլոգիաների գործնական կիրառման վերաբերյալ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա** միջանձնային հարաբերությունների և բանակցությունների վարման հատկությունների, անձնավորության տարբեր կառույցների զարգացման մեխանիզմները, վարքի կարգավորման տարբեր հնարները:

**2. կարողանա** ներկայացնել իրենց գիտելիքները, համադրել հոգեբանական նոր տեղեկությունները իրենց գիտելիքների հետ, կունենան անհատական գործունեության ընթացքում միջանձնային հարաբերությունների և բանակցությունների վարման առանձնահատկություններն ուսումնասիրելու հմտություններ և կարողություններ:

**3. կտիրապետի** միջանձնային հարաբերությունների և բանակցությունների վարման գիտելիքները գործնականում կիրառելու մեթոդներին, հասարակական ներդաշնակ փոխհարաբերությունների ձևավորման, ուսման, դաստիարակության, աշխատանքային գործունեության արդյունավետության բարձրացման հոգեբանական միջոցներին:

**Բովանդակությունը.**

*Թեմա 1*՝ Ընդհանուր գաղափար միջանձնային հարաբերությունների մասին: *Թեմա 2*՝ Միջանձնային հարաբերությունների դերն ու նշանակությունը ժամանակակից կյանքում, գործառույթները: *Թեմա 3*՝ Բանակցելու տեխնոլոգիաների կիրառման խնդիրները: *Թեմա 4*՝ Միջանձնային հարաբերությունների ժամանակակից դասակարգումը: *Թեմա 5*՝ Ընդհանուր գաղափար բանակցությունների մասին: *Թեմա 6*՝ Բանակցությունների տեսակները և վարման ռազմավարությունները: *Թեմա 7*՝ Բանակցությունների վարման ազգային առանձնահատկությունները:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

**10/M33. Հոգեբանական պրակտիկում (3 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ծրագրի նպատակն է՝ ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել կիրառական հոգեբանության, հոգեբանական հետազոտություն անցկացնելու, հոգեբանական մեթոդները և մեթոդիկաները կիրառելու վերաբերյալ: Ուսուցանել անհատական և խմբային հոգեբանական աշխատանքների յուրահատկություններին ու տեսակներին: Ծանոթացնել հոգեբանական տարբեր մեթոդներին, թերապիաներին, իմացական գործընթացների առանձին հատկությունները

բացահայտելուն, հույզերի, անձնային առանձնահատկությունների, «եռ»-ի բաղադրիչների բացահայտմանը, անձնային աճին ուղղված տեխնիկաներին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա** ժամանակակից հոգեբանության մեթոդները: Կտարբերեն մեթոդ և մեթոդիկա հասկացությունները: Կիմանան հոգեբանական խմբային և ահատական աշխատանքների տարբերություններն ու առանձնահատկությունները, մաթեմատիկական որոշ բանաձևերի կիրառում թեստերի արդյունքների վերլուծություններում, հոգեբանության ամենակիրառական թերապևտիկ մեթոդները, անձի վախերի, տագնապայնության հաղթահարման, ինչպես նաև՝ անձի հոգեբանական առանձնահատկությունների բացահայտմանն ուղղված մեթոդները, անձնային աճին միտված թրենինգները:

**2. կկարողանա** բանավոր և գրավոր խոսքով ներկայացնել իրենց գիտելիքները, համադրել հոգեբանական նոր ինֆորմացիան իր գիտելիքների հետ, հոգեկանի հատկություններ բացահայտել հոգեբանական մեթոդների կիրառմամբ, կատարել ոչ լայնածավալ գիտահետազոտական աշխատանքներ:

**3. կտիրապետի** հոգեբանական գիտելիքները գործնականում կիրառելու հոգեբանության մեթոդներին:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Հոգեկանի ուսումնասիրման մեթոդները: **Թեմա 2՝** Կետտելի թեստի ուսումնասիրում: **Թեմա 3՝** Հոգեբանական խմբային աշխատանք: **Թեմա 4՝** «Ես»-ի ընկալման առանձնահատկությունների բացահայտում և մեկնաբանում: **Թեմա 5՝** Հիշողության գործընթացի առանձնահատկությունների բացահայտում և մեկնաբանում: **Թեմա 6՝** Խոսքի և մտածողության առանձնահատկությունների բացահայտումն ու մեկնաբանումը: **Թեմա 7՝** Երևակայության մեխանիզմների և տեսակների բացահայտում և մեկնաբանում: **Թեմա 8՝** Անձի հոգեբանական տիպոլոգիական առանձնահատկությունների բացահայտում և մեկնաբանում: **Թեմա 9՝** Պրոեկտիվ մեթոդներ: Տարբեր թերապիաների միջոցով հոգեբանական ինդիքների հաղթահարում: **Թեմա 10՝** Անձի ինքնագնահատականի բացահայտում և մեկնաբանում: **Թեմա 11՝** Արտթերապիա: Հեքիաթաթերապիա

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3,5; 3,5; 3 միավոր:

**Տիտղոսային ծրագրի կամընտրական դասընթացներ**

**10/M11. Ներլուգվաբանական ծրագրավորում (3 կրեդիտ)**

*Շարաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

**Ծրագրի նպատակն** է՝ ծրագրում տրվում են ՆԼԾ-ի հիմնական հասկացությունները և տեխնիկաները, որոնք ներկայացված են ձևափոխումների 3 ձևով՝ խարխիսավորումների, ենթամոդալական և ռեֆրեյմինգային փոփոխություններով. Դասընթացի ծրագիրը նախատեսված է ձևավորել ուսանողների մոտ հմտություններ, որոնք անհրաժեշտ են բացասական էմոցիաների և ոչ արդյունավետ վարքի հետ կատարելու հոգեբանական շտկման աշխատանքներ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **կիրանա** ներդրելով բանական ծրագրավորման տեսության և պրակտիկայի հիմնական դրույթները

2. **կկարողանա** կիրառել ստացված գիտելիքները՝ նպատակ ունենալով զարգացնել զգայողականությունը մարդու կողմից օգտագործվող լեզվաբանական և ոչ վերբալ կարծրատիպերի նկատմամբ: Օգտագործել ստացված գիտելիքները՝ սեփական կամ ուրիշ մարդկանց հոգեբանական խնդիրները լուծելու նպատակով:

**3. կտիրապետի**

3.1. Ինքնակառավարման հմտություններին

3.2. Փոփոխություններ կատարելու հմտություններին

3.3. Մարդու տարբեր հոգեբանական որակները կատարելագործելու հմտություններին

**Բովանդակությունը.**

*Թեմա 1՝* ՆԼԾ-ի ծագման պատմությունը: Աշխարհի մոդելներ: *Թեմա 2՝* Մետամոդել: *Թեմա 3՝* Ռապորտի հաստատումը: *Թեմա 4՝* Լավ ձևակերպված արդյունքի պայմանները: *Թեմա 5՝* Խարխիսավորում: *Թեմա 6՝* Անձնային պատմության փոփոխություն: *Թեմա 7՝* Վի գուալ-կինեստետիկ դիսցիպլինա: *Թեմա 8՝* Ռեֆրեյմինգային տեխնիկաներ:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

**10/M12. Զանգվածային գիտակցության հոգեբանություն (3 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի **նպատակն է** հանգամանալի վերլուծել մարդկանց զանգվածների պրոբլեմը հոգեբանության շրջանակում, լուսաբանել գիտության մեջ առկա մոտեցումները, տեսությունները և կոնցեպցիաները, որոնք քննարկում են անձի և զանգվածների հարաբերության հիմնախնդիրը սոցիալական գիտության և հոգեբանության մեջ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացը լիովին պատկերացում է տալիս զանգվածների վարքի և գիտակցության հոգեբանական ասպեկտի մասին՝ «Զանգվածների գիտակցության հոգեբանություն» առարկայի միջոցով: Առարկայի ուսուցումը կխորացնի ուսանողների գիտելիքները անձի և առանձին զանգվածների սոցիալական վարքի և խմբային գիտակցության և գործունեության վերաբերյալ, մարդկային զանգվածների ուսումնասիրման տեսական և գործնական հոգեբանական օբյեկտիվ մեթոդների մասին:

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

### **1. կիմանա**

Խմբերի և զանգվածների ուսումնասիրման մեթոդաբանության մասին, Չանգվածների ձևավորման և հետագա զարգացման կարևոր փուլերի և մեխանիզմների վերաբերյալ,

Սոցիալական գիտության մեջ առկա “անձ և զանգված” համակարգը մեկնաբանող տեսությունների և կոնցեպցիաների մասին:

### **Բովանդակությունը.**

*Թեմա 1՝* Զանգվածային հոգեբանության տեղը գիտական համակարգում:

*Թեմա 2.* Զանգվածային սոցիոլոգիայի փիլիսոփայական և հոգեբանական ուղղությունները: *Թեմա 3՝* Զանգվածային վարքի վերլուծություն և կոնֆլիկտները զանգվածներում: *Թեմա 4՝* Զանգվածային գիտակցություն: *Թեմա 5՝* Զանգված և հասարակություն: *Թեմա 6՝* Մշակույթային, կրոնական և էթնիկական զանգվածներ: *Թեմա 7՝* Զանգվածների հոգեբանության ժամանակակից դիրքը և հեռանկարները

### **Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

### **Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

### **10M/13. Հոգեֆիզիոլոգիա (3 կրեդիտ)**

*Շարաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

### **Նպատակը.**

Հոգեֆիզիոլոգիա» առարկայի նպատակն է հոգեկան գործընթացների ֆիզիոլոգիական հիմքերի, մեխանիզմների ուսումնասիրությունը, որոնք դիտարկում են նաև նեյրոնային, սինապսային և մոլեկուլային մակարդակում: Ինչպես նաև դասընթացի նպատակն է ունկնդիրներին մատուցել գիտելիքներ և ծանոթացնել ընկալման, զգայական արտացոլման, հիշողության, շարժումների, հույզերի, մտածողության, գիտակցության և այլ հոգեկան գործընթացների ուսումնասիրության ֆիզիոլոգիական մեթոդներին:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **Կիմանա** հոգեկան գործընթացների ձևավորման մեխանիզմների ու հիմքերի հիմնական տեսությունները:

2. **Կկարողանա** հոգեֆիզիոլոգիայի առանձին հարցերի վերաբերյալ կատարել գրականության վերլուծություն և ուսումնասիրություն:

3. **Կտիրապետի** հոգեֆիզիոլոգիայում կիրառվող հիմնական ախտորոշիչ մեթոդների կիրառությանը:

**Քովանդակությունը.**

*Թեմա 1*՝ Ներածություն: *Թեմա 2*՝ Գլխուղեղը որպես հոգեկանի օրգան:

*Թեմա 3*՝ Հոգեֆիզիոլոգիայի ուսումնասիրության ժամանակակից մեթոդները:

*Թեմա 4*՝ Ընկալման և զգայության հոգեֆիզիոլոգիա: *Թեմա 5*՝ Շարժման

հոգեֆիզիոլոգիա: *Թեմա 6*՝ Հիշողության հոգեֆիզիոլոգիա: *Թեմա 7*՝ Ուսուցման

հոգեֆիզիոլոգիա: *Թեմա 8*՝ Ուշադրության հոգեֆիզիոլոգիա: *Թեմա 9*՝ Հույզերի

հոգեֆիզիոլոգիա: *Թեմա 10*՝ Սթրեսի հոգեֆիզիոլոգիա: *Թեմա 11*՝ Ֆունկցիոնալ

վիճակների հոգեֆիզիոլոգիա: *Թեմա 12*՝ Քնի հոգեֆիզիոլոգիա: *Թեմա 13*՝

Գիտակցության և անգիտակցականի հոգեֆիզիոլոգիա: *Թեմա 14*՝ Խոսքի

հոգեֆիզիոլոգիա: *Թեմա 15*. Մտածողության հոգեֆիզիոլոգիա: *Թեմա 16*՝

Միջկիսագնդային ասիմետրիա

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

**10/M14. Սոցիալ-հոգեբանական տեխնոլոգիաներ (3 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Առարկայի նպատակն է՝ սոցիալ-հոգեբանական տեխնոլոգիաների կիրառմամբ ուսումնասիրել անհատի՝ որպես սոցիալական դերակատարի, ներխաճային փոխներգործությունները, խմբային դինամիկան, դերային վարքի դրսևորումները, միջանձնային փոխհարաբերությունները, հաղորդակցման առանձնահատկությունները, սոցիալական կոնֆլիկտները, դիրքորոշումները և այլ սոցիալ-հոգեբանական երևույթները:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **Կիմանա** բոլոր փաստերն և օրինաչափությունները, որոնք բացահայտում են սոցիալ- հոգեբանական երևույթները, խմբային դինամիկան, անձի սոցիալականացման ինստիտուտները, սոցիալական վարքի տեսակները, «Ես» - կոնցեպցիան և նրա կառուցվածքը, ինչպես նաև սոցիալական կոնֆլիկտները, խոսքային հաղորդակցման տեսակներն և դիրքորոշումների փոփոխությունները, իմացական աններդաշնակության հիմնախնդիրներն ու սոցիալական հոգեբանության կիրառական նշանակությունը:

**2. կկարողանա** գտնել տեղն ու դերը ներխաճային գործունեության ընթացքում, ձևավորել, կայունացնել, և կառավարել միջանձնային փոխհարաբերություններ խմբում: Ձևավորել սոցիալական հարաբերություններ և դիրքորոշումներ խմբում: Գտնել ուղիներ ներխաճային փոխներգործության ընթացքում առաջացած սոցիալական կոնֆլիկտները հաղթահարելու համար: Վերլուծել անձի վարքը, սոցիալական գործընթացները սոցիալական հոգեբանության տեսանկյունից: Ներխաճային գործունեության ընթացքում ներազդել անհատի և խմբի վարքի վրա:

**3. կտիրապետի** սոցիալական հոգեբանության հիմնական մեթոդներին և տեխնոլոգիաներին, դրանց կիրառմանը՝ մարդկային գործունեության տարբեր ոլորտների ուսումնասիրության գործընթացում: Սոցիալ- հոգեբանական և հասարակական հոգեբանական երևույթների փոխազդեցությանը և փոխկապվածությանը, դրանց մեկնաբանման և վերլուծությանը, պրակտիկ գործունեության իրականացմանը: Անձի և խմբի փոխներգործության, հոգեւոցիալական, իմացական և հոգեֆիզիոլոգիական զարգացման մակարդակը ախտորոշելու ընդունակությանը :

**Բովանդակությունը.**

**Թեմա 1՝** Միջանձնային հարաբերությունների կառուցման տեխնոլոգիաներ: **Թեմա 2՝** Սոցիալ-հոգեբանական ադապտացիայի տեխնոլոգիաներ: **Թեմա 3՝** Կոնֆլիկտային վարքի ախտորոշման տեխնոլոգիաներ: **Թեմա 4՝** Ընտանիքի անդամների հանդեպ դրսևորվող վերաբերմունքի տեխնոլոգիաներ: **Թեմա 5՝** Գործարար և դերային խաղի տեխնոլոգիաներ: **Թեմա 6՝** Անձի մասնագիտական ուղղվածության ձևավորման տեխնոլոգիաներ

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ ռեֆերատի ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

**10/M27. Արտ-թերապիա (3 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ծրագրի նպատակն է՝ Ուսանողներին ծանոթացնել արտ-թերապիայի հիմնական մոտեցումների ու տեսությունների հետ: Դասընթացի արդյունքում ուսանողները ձեռք կբերեն ամբողջական պատկերացում արտ-թերապիայի ոճի և ընթացքի վերաբերյալ, ինքնուրույն կփորձարկեն մի ամբողջ շարք տեխնիկական հնարներ և կկարողանան ինքնուրույն ծրագրել հոգեթերապևտիկ աշխատանքի անհրաժեշտ մարտավարությունները:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

**1. կիմանա**

1.1. Արտ-թերապիայի հիմնական գաղափարները,

1.2. Արտ-թերապիայի կիրառման առանձնահատկությունները,

**2. կկարողանա** բանավոր և գրավոր խոսքով ներկայացնել իրենց գիտելիքները, համադրել հոգեբանական նոր տեղեկությունները իրենց գիտելիքների հետ, կունենան անհատական գործունեության ընթացքում արտ-թերապևտիկ աշխատանք կատարելու հմտություններ և կարողություններ:

**3. կտիրապետի** հոգեբանական գիտելիքները գործնականում կիրառելու մեթոդներին, արտ-թերապևտիկ տեխնիկաները արդյունավետ օգտագործելու հնարներին, ինչպես նաև այցելու-հոգեբան հարաբերություններ արդյունավետ կառուցելու հոգեբանական միջոցներին:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1**՝ Արտ-թերապևտիկ աշխատանքի յուրահատկությունները: **Թեմա 2**՝ Արտ-թերապիայի հիմնական ուղղությունները: **Թեմա 3**՝ Արտ-թերապիայի տեսակները;Նյութերն արտ-ում: **Թեմա 4**՝ Սիմվոլի նշանակությունն արտ-թերապիայում: **Թեմա 5**՝ Հոգեթերապևտիկ հարաբերություններն արտ-թերապիայում: **Թեմա 6**՝ Անհատական և խմբային արտ-թերապիա: **Թեմա 7**՝ Արտ-թերապևտիկ աշխատանքի փուլերը: **Թեմա 8**՝ Արտ-թերապիայի բնագավառները: **Թեմա 9**՝ Թերապիա ստեղծագործական ինքնարտահայտմամբ; Արտ-թերապիայի խիստորոշիչ հնարավորությունները:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ ռեֆերատի ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:

**10/M29. Սոցիալ-հոգեբանական մարզում (3 կրեդիտ)**

*Շարքայական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Ուսումնական գործունեության ընթացքում մագիստրանտին կրեդիտային համակարգով գիտելիքներ հաղորդել «Սոցիալ-հոգեբանական մարզումներ» առարկայի տեսական մոտեցումների, հիմնական հասկացությունների և մարզումների (թրենինգների) որպես ակտիվ սոցիալ-հոգեբանական ուսուցման ու խմբային փոխազդեցության մեթոդի գործնական հմտությունների մասին: Հատուկ ուշադրություն է դարձվում մագիստրանտի գործնական պատրաստմանը:

Դասընթացը ունի գործնական ուղղվածություն և նախատեսում է տեսական գիտելիքների կիրառումը մարդկային փոխազդեցության տարբեր ոլորտներում Սոցիալ-հոգեբանական մարզումների միջոցով արդյունավետ լուծել խնդիրները, որոնք կապված են շփման, սեփական հուզական վիճակների կառավարման, հույզերի ճիշտ արտահայտման, շրջապատողների մոտ դրանց ըմբռնման, ինքնաճանաչման, ինքնարնդունման և այլ հմտությունների զարգացման հետ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. **Կիմանա** սոցիալ-հոգեբանական մարզումների, որպես խմբային հոգեբանական ուսուցման զարգացման տեսական հիմունքները ու ժամանակակից կիրառման ոլորտները, սոցիալ- հոգեբանական ակտիվ ուսուցման մեթոդները և խմբային ուսուցման հիմնական կանոնները ու մոտեցումները:

2. **Կկարողանա** ստացված գիտելիքները օգտագործել պրակտիկ գործունեության մեջ. տարբերակել սոցիալ-հոգեբանական մարզումների առանձին տեսակների կառուցվածքը յուրահաստկությունները, գործընթացի էությունը, նպատակը, ինչպես նաև ինքնուրույն մշակել սոցիալ-հոգեբանական մարզումների թեմատիկ ծրագրեր:

3. **Կտիրապետի** սոցիալ-հոգեբանական մարզումների ուսուցման հիմնական մեթոդներին, տարբեր թեմաներով սոցիալ-հոգեբանական մարզումների ծրագրի ձևակերպման ու մշակման առանձնահատկություններին, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական մարզումների վարման հիմնական մեթոդներին և հմտություններին:

#### **Բովանդակությունը.**

**Թեմա 1'**Սոցիալ-հոգեբանական մարզումները կիրառական հոգեբանության համակարգում: **Թեմա 2'**Սոցիալ-հոգեբանական մարզումներ հոգեբանական առանձնահատկությունները: **Թեմա 3'** Խմբային մարզումների մեթոդական խնդիրները: **Թեմա 4'**Սոցիալ-հոգեբանական մարզումների նախապատրաստումը: **Թեմա 5'** Խմբային մարզումների գործընթացը: **Թեմա 6'** Թրենինգային խմբի խմբավարը:

#### **Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ ռեֆերատի ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

#### **Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր:



## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

**ՄԱԳԻՍՏՐՈՄԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

Մասնագիտություն՝ « \_\_\_\_\_ »

Ուսանող \_\_\_\_\_ Ընդունվել է մագիստրատուրա  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_ ազգանուն \_\_\_\_\_, 20\_\_ թ.  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_ անուն, հայրանուն \_\_\_\_\_

Նախորդ որակավորումը \_\_\_\_\_ Շնորհված նախորդ որակավորումը  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_ մասնագիտությունը \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_ մասնագիտացումը \_\_\_\_\_, 20\_\_ թ.  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_ ավարտած բուհը \_\_\_\_\_

Մագիստրոսական \_\_\_\_\_ «Շնորհված է մագիստրոսի որակավորում»:  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_ մասնագիտությունը \_\_\_\_\_, 20\_\_ թ.  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_ մասնագիտացումը \_\_\_\_\_

«Ուսանողի ուսումնառության անհատական ծրագիրը ստուգված է»:

Ուսումնական խորհրդատու՝ \_\_\_\_\_ Ծրագրի ղեկավար՝ \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_ ազգանուն, անուն, գիտ.աստ., կոչում \_\_\_\_\_ ազգանուն, անուն, գիտ.աստ., կոչում  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_ ստորագրություն \_\_\_\_\_ ստորագրություն  
 \_\_\_\_\_, 20\_\_ թ. \_\_\_\_\_, 20\_\_ թ.

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ (72 կրեդիտ)					
Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ			(6 կրեդիտ)		
Դասընթաց/Կրթական մոդուլ			Կրեդիտը / Գնահատ.	Բացթողում / Ավելացում *	Կիսամ./ Տարի
Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում			3		Ա
Մասնագիտության փիլիսոփայական հարցեր			3		Ա
Լրացական դասընթացներ			(0 կրեդիտ)		
Դասընթաց/Կրթական մոդուլ			Կրեդիտը / Գնահատ.	Բացթողում / Ավելացում *	Կիսամ./ Տարի
Անգլերեն			0		Ա
Տիրոջսային ծրագրի պարտադիր դասընթացներ			(48 կրեդիտ)		
Դասընթաց/Կրթական մոդուլ			Կրեդիտը / Գնահատ.	Բացթողում / Ավելացում *	Կիսամ./ Տարի





ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ N \_\_\_\_\_

Մագիստրոսի կրթական ծրագիր Գրանցման № \_\_\_\_\_ « » \_\_\_\_\_ 20 թ.

Անձնական համար	Ազգանուն անուն հայրանուն
ՄՏԱ080212029	Ավանեյան Ռեզինա Համլետի
Մասնագիտություն (մասնագիտացում)	
080200 Կառավարում	

1-ին կիսամյակ

Աշնանային կիսամյակ, 2014 թ.

Թվանիշ	Դասընթացի անվանումը	Կրեդիտ	Գնահատական	Թվային միավորներ
18/M01	Մասնագիտական օտար լեզու /անգլերեն/ 1	-	Ստ.	-
05/M02	Տեղեկատ. տեխն. մասնագիտ. հետազոտություններում	3	Լավ	15
16/M01	Մասնագիտ. արդի հիմնախնդ., փիլիսոփ. հարցեր	3	Լավ	15
XX/MXX	Դասընթաց – 1	3	Բավ.	10
XX/MXX	Դասընթաց – 2	3	Բավ.	11
XX/MXX	Դասընթաց – 3	3	Գեր.	19
XX/MXX	Դասընթաց – 4	4	Բավ.	10
XX/MXX	Դասընթաց – 5	4	Լավ	13
XX/MXX	Դասընթաց – 6	4	Լավ	17
XX/MXX	Գիտական ղեկ. սեմինար 1	3	Ստ.	-
Գումարային կրեդիտներ		30	Գնահատված կրեդիտներ	
		30	27	
		Վարկանիշային միավորներ		Կիսամյակային ՄՈԳ
		370		13.70

Ընդհանրացված արդյունքները 2014 թ. աշնանային կիսամյակից հետո

Լրացված գումարային կրեդիտներ	Լրացված գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Ամփոփիչ ՄՈԳ
30	27	370	13.70

2-րդ կիսամյակ

Գարնանային կիսամյակ, 2015 թ.

Թվանիշ	Դասընթացի անվանումը	Կրեդիտ	Գնահատական	Թվային միավորներ
18/M01	Մասնագիտական օտար լեզու /անգլերեն/ 2	-	Ստ.	-
XX/MXX	Դասընթաց – 7	3	Լավ	17
XX/MXX	Դասընթաց – 8	3	Բավ.	8
XX/MXX	Դասընթաց – 9	3	Գեր.	20
XX/MXX	Դասընթաց – 10	4	Գեր.	19
XX/MXX	Դասընթաց – 11	3	Լավ	13
XX/MXX	Գիտական ղեկ. սեմինար 2	3	Ստ.	-
XX/MXX	Դասընթաց – 12	4	Բավ.	8
XX/MXX	Դասընթաց – 13	4	Լավ	14
XX/MXX	Գիտահետազոտական աշխատանք 1	3	Ստ.	-
Գումարային կրեդիտներ		30	Գնահատված կրեդիտներ	
		30	27	
		Վարկանիշային միավորներ		Կիսամյակային ՄՈԳ
		370		13.70

30	24	338	14.08
----	----	-----	-------

Ընդհանրացված արդյունքները 2015 թ. գարնանային կիսամյակից հետո

Լրացված գումարային կրեդիտներ	Լրացված գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Ամփոփիչ ՄՈԳ
60	51	708	13.88

3-րդ կիսամյակ

Աշնանային կիսամյակ, 2015 թ.				
Թվանիշ	Դասընթացի անվանումը	Կրեդիտ	Գնահատական	Թվային միավորներ
XX/MXX	Դասընթաց – 14	3	Գեր.	18
XX/MXX	Դասընթաց – 15	3	Լավ	17
XX/MXX	Դասընթաց – 16	3	Լավ	16
XX/MXX	Դասընթաց – 17	3	Լավ	15
XX/MXX	Դասընթաց – 18	3	Գեր.	19
XX/MXX	Դասընթաց – 19	3	Բավ.	9
XX/MXX	Դասընթաց – 20	3	Լավ	13
XX/MXX	Գիտական ղեկ. սեմինար 3	3	Ստ.	-
XX/MXX	Գիտահետազոտական աշխատանք 2	6	Ստ.	-
Գումարային կրեդիտներ	Գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Կիսամյակային ՄՈԳ	
30	21	321	15.29	

Ընդհանրացված արդյունքները 2015 թ. աշնանային կիսամյակից հետո

Լրացված գումարային կրեդիտներ	Լրացված գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Ամփոփիչ ՄՈԳ
90	72	1029	14.29

4-րդ կիսամյակ

Գարնանային կիսամյակ, 2016 թ.				
Թվանիշ	Դասընթացի անվանումը	Կրեդիտ	Գնահատական	Թվային միավորներ
XX/MXX	Գիտական ղեկավարի սեմինար 4	3	Ստ.	-
XX/MXX	Գիտահետազոտական պրակտիկա	3	Ստ.	-
XX/MXX	Գիտամանկավարժական պրակտիկա	3	Ստ.	-
XX/MXX	Գիտահետազոտական աշխատանք 3	9	Ստ.	-
XX/MXX	Մագիստրոսական թեզի պաշտպանություն	12	Գեր.	18
Գումարային կրեդիտներ	Գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Կիսամյակային ՄՈԳ	
30	12	216	18.00	

Ընդհանրացված արդյունքները 2016 թ. գարնանային կիսամյակից հետո

Լրացված գումարային կրեդիտներ	Լրացված գնահատված կրեդիտներ	Վարկանիշային միավորներ	Ամփոփիչ ՄՈԳ
120	84	1245	14.82

Ամփոփիչ արդյունքներ			
Գումարային կրեդիտներ	Գնահատված կրեդիտներ	Արդյունարար վարկանիշային միավորներ	Արդյունարար ՄՈԳ
120	84	1245	14.82

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԻ ՎԵՐՁԸ  
ԱՆՎԱՎԵՐ Է ԱՌԱՆՑ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ  
ԿՆԻՔԻ

Տեսուչ \_\_\_\_\_

Ամբիոնի վարիչ \_\_\_\_\_

Ուս. մասի պետ \_\_\_\_\_





Հանձնաժողովի նախագահ \_\_\_\_\_  
(ստորագրություն)

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ 2014 թ.